



Համառոտագիր 30

Հունիս 2014

Պետական Գնումներ

# 2014 թվականի ԵՄ Հրահանգներ. Հանրային Հատվածի և Կոմունալ Կազմակերպությունների Գնումներ

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

- [Ներածություն](#)
- [2004 թվականի Հրահանգների վերանայման պատճառները](#)
- [2014 թվականի հրահանգների կառուցվածքը և բովանդակությունը](#)
- [2014 թվականի հրահանգների պարտադիր և ընտրանքային դրույթները](#)
- [Հայտարարմանը և նվազագույն ժամկետներին վերաբերող ընտրանքային դրույթները](#)
- [Հարկերի կամ սոցիալական վճարների վճարման պարտավորությունների խախտումներ](#)

Թույլատրված է տպագրության Կարեն Հիլի կողմից, SIGMA ծրագրի ղեկավար



[www.sigmaweb.org](http://www.sigmaweb.org)

This brief is published under the responsibility of the Secretary-General of the OECD. The opinions expressed and arguments employed herein do not necessarily reflect the official views of the European Union or OECD member countries, or of beneficiaries participating in the SIGMA Programme.

This document and any map included herein are without prejudice to the status of or sovereignty over any territory, to the delimitation of international frontiers and boundaries and to the name of any territory, city or area.

## Ներածություն

**Գնումների երեք նոր հրահանգների հրապարակումը.** 2014 թվականի մարտի վերջին երեք տարվա ծավալուն բանակցություններից հետո Եվրոպական Միության Պաշտոնական Տեղեկագիրը (ԵՄՊՏ) հրապարակեց գնումների երեք նոր հրահանգները: Հանրային հատվածի պատվիրատուների և կոմունալ կազմակերպությունների գնումներին վերաբերող հրահանգներից երկուսը փոխարինեցին 2004 թվականի ԵՄ գնումների հրահանգները: Երրորդ հրահանգը ստեղծեց նոր կանոնակարգված ռեժիմ՝ կոնցեսիոն պայմանագրերի շնորհման համար: Նոր հրահանգների կրկնօրինակները կարող են ներբեռնվել հետևյալ հղումն օգտագործելով. <http://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/?uri=OJ:L:2014:094:TOC>

**Կիրարկման վերջնաժամկետ.** ԵՄ Անդամ երկրների համար գնումների նոր հրահանգներն իրենց ազգային օրենսդրության մեջ փոխատեղելու վերջնաժամկետը 2016 թվականի ապրիլի 18-ն է: Այս ընդհանուր վերջնաժամկետը մի շարք դեպքերում երկարաձգվել է՝ էլեկտրոնային գնումների միջոցառումների կիրարկման համար:

**Գնումների սույն համառոտագիրը** սահմանում է 2014 թվականի հանրային հատվածի և կոմունալ կազմակերպությունների հրահանգներում ներառված հիմնական փոփոխությունները: Համառոտագիրը նպատակ չունի տալ բոլոր փոփոխությունների սպառիչ վերլուծությունը: Գնումների մեկ այլ համառոտագիր (no. 30) կենտրոնանում է 2014/23/ԵՄ Կոնցեսիաների Հրահանգի վրա:

**Կիրառված սահմանումները և մոտեցումները.** Հրահանգներին հղում անելիս կիրառվում են հետևյալ սահմանումները.

|  |            |  |
|--|------------|--|
| “2014 թվականի Հանրային Ոլորտի Հրահանգ”               | 2014/24/ԵՄ | } Միասին այսուհետ՝ “2014 թվականի հրահանգներ” |
| “2014 թվականի Կոմունալ Կազմակերպությունների Հրահանգ” | 2014/25/ԵՄ |  |
| “2004 թվականի Հանրային Ոլորտի Հրահանգ”               | 2004/18/ԵՀ | } Միասին այսուհետ՝ “2004 թվականի հրահանգներ” |
| “2004 թվականի Կոմունալ Կազմակերպությունների Հրահանգ” | 2004/17/ԵՀ |  |

Սույն համառոտագրում ներկայացված փոփոխությունները լուսաբանված են նույն հերթականությամբ, ինչ նշված են 2014 թվականի Հանրային Ոլորտի Հրահանգում: Անհրաժեշտության դեպքում հղումներ են արված նաև 2014 թվականի Կոմունալ Կազմակերպությունների Հրահանգի համարժեք դրույթներին:

## 2004 թվականի հրահանգների վերանայման պատճառները

Պետական գնումները շուկայի վրա հիմնված այն գործիքներից է, որը կարող է օգտագործվել խելացի, կայուն և ընդգրկուն աճի Եվրոպա 2020<sup>1</sup> ռազմավարությունն իրականացնելու համար՝ նպատակ ունենալով.

- բարելավել գործարարության պայմանները՝ նորարարություն իրականացնելու համար
- խրախուսել կանաչ գնումների ավելի շատ կիրառումը
- ապահովել հանրային ֆինանսների ամենաարդյունավետ օգտագործումը
- բաց պահել գնումների շուկան՝ ողջ ԵՄ-ի համար:

Այս նպատակներն արտացոլված են 2014 թվականի հրահանգներում ներառված փոփոխություններում, որոնք կենտրոնանում են թափանցիկության ապահովման, ճկունության ավելացման և պետական գնումներում փոքր և միջին ձեռնարկությունների ներգրավման խրախուսման վրա: Լրացուցիչ դրույթները գործ ունեն հատուկ կանաչ (չրջակա միջավայրի) հետ կապված հարցերի հետ: Հստակ ընդդգծվում է, որ էլեկտրոնային գնումները հանդիսանում են արդյունավետության բարձրացման և թափանցիկության ապահովման էական գործոն և ավելի մեծ շեշտ է դրվում գնումների գործընթացը էլեկտրոնային միջոցների կիրառմամբ իրականացնելու վրա:

2014 թվականի հրահանգները ներառում և լրացնում են Եվրոպական Միության Արդարադատության Դատարանի (ԵՄԱԴ) նախադեպային իրավունքով սահմանված գնումների սկզբունքները, որոնք ներառված չէին 2004 թվականի հրահանգներում: Օրինակ՝ ներքին գործարքների<sup>2</sup> և պայմանագրերում փոփոխությունների կատարման<sup>3</sup> վերաբերյալ հողվածների ներառումը: Որոշ դեպքերում, երբ ԵՄԱԴ որոշումը հանգեցրել է հակասության կամ անորոշության, 2014 թվականի հրահանգներն ավելի շատ ճկունություն են թույլատրում, քան ԵՄԱԴ-ն: Օրինակ, Հանրային Հատվածի Հրահանգի հողված 68-ի նոր դրույթը թույլատրում է անձնակազմին վերաբերող չափորոշիչը որոշ դեպքերում կիրառել որպես շնորհման չափորոշիչ: Տես հողված 68-ի մեկնաբանությունը ստորև:

2014 թվականի հրահանգներն ավելի սերտ են կապված միմյանց հետ, քան 2004 թվականի հրահանգները: Ավելի շատ ճկունություն է ներմուծվել 2014 թվականի Հանրային Հատվածի Հրահանգում:

## 2014 թվականի հրահանգների կառուցվածքը և բովանդակությունը

2014 թվականի հրահանգները երկուսն էլ ունեն նույն կառուցվածքը.

- Դեկլարատիվ մաս

<sup>1</sup> Տես Եվրոպական Հանձնաժողով (3 մարտի 2010 թ.) “Հաղորդագրություն Հանձնաժողովից – Եվրոպա 2020 – Խելացի, կայուն և ընդգրկուն աճի ռազմավարություն”

<sup>2</sup> Հիմնական գործերն են C-107/98 Teckal և C-480/06 Commission v Germany. Տես նաև SIGMA (2014), Պետական Գնումների վերաբերյալ Եվրոպական Միության Արդարադատության Դատարանի մի քանի վճիռներ, գլուխ 4:

<sup>3</sup> Հիմնական գործն է C-454/06 presstext Nachrichtenagentur. Տես նաև ԵՄԱԴ-ի վերաբերյալ SIGMA հրապարակման գլուխ 9 (վերը նշված հղում 3):

- Բովանդակություն
- Հոդվածներ պարունակող վերնագրեր՝ բաժանված գլուխների, վերջիններս էլ՝ բաժինների:
- Հավելվածներ

Հրահանգների դեկլարատիվ մասի դրույթները գործող դրույթներ չեն: Նրանք պարունակում են հոդվածներում ներառված գործող դրույթների ենթատեքստը և բացատրությունը: Դեկլարատիվ մասը տեղեկությունների օգտակար աղբյուր է, որն օժանդակում է հոդվածների մեկնաբանմանը:

Հավելվածները պարունակում են հոդվածներում հղում արված լրացուցիչ և փոխլրացնող տեղեկությունները և պահանջները, ինչպիսին է օրինակ՝ հայտարարության բովանդակությունը:

### **2014 թվականի հրահանգների պարտադիր և ոչ պարտադիր դրույթները**

Հոդվածների մեծամասնությունը պարտադիր են, Անդամ երկրները պարտավոր են կիրարկել դրանք:

Որոշ հոդվածներ ոչ պարտադիր են, ինչը նշանակում է, որ Անդամ երկրներն ունեն ընտրության հնարավորություն՝ դրանք կիրարկելու կամ չկիրարկելու հարցում: Գնումների սույն համառոտագրում նման հոդվածների դրույթները կոչվում են “ոչ պարտադիր դրույթներ”:

### **Հղում օգտակար համացանցային էջի**

2014 թվականի հրահանգների և տվյալներ պարունակող փաստաթղթերի ԵՀ համացանցային էջ.

[http://ec.europa.eu/internal\\_market/publicprocurement/modernising\\_rules/reform\\_proposal/s/index\\_en.htm](http://ec.europa.eu/internal_market/publicprocurement/modernising_rules/reform_proposal/s/index_en.htm)

## Վերնագիր I – Գործողության ոլորտը, սահմանումը և ընդհանուր սկզբունքներ

### Հոդված 1. Առարկան և գործողության ոլորտը

2014 թվականի Հանրային Հատվածի Հրահանգի հոդված 1-ը պարունակում է 2004 թվականի հրահանգներում չընդգրկված նոր դրույթներ, որոնք բացատրում են պետական գնումների հասկացությունը: Հոդվածը նշում է, որ հրահանգը կիրառվում է պատվիրատուների բոլոր գնումների նկատմամբ՝ անկախ դրանց՝ հանրային նպատակների համար նախատեսված լինելու հանգամանքից:

Դեկլարատիվ բնույթի դրույթ 5-ը պարզ է դարձնում, որ 2014 թվականի Հանրային Հատվածի Հրահանգը չի ստիպում Անդամ Երկրներին պայմանագիր կնքել կամ պատվիրակել այն ծառայությունները, որոնք ցանկանում են մատուցել իրենք: Հրահանգը պարունակում է վարքագծի կանոններ, որոնք պետք է պահպանվեն, երբ Անդամ երկրները որոշում են պայմանագիր կնքել կամ պատվիրակել ծառայության մատուցումը: Հոդված 1(4) հաստատում է, որ Անդամ Երկրներն ազատ են՝ որոշելու ընդհանուր տնտեսական հետաքրքրություն ներկայացնող հանրային խնդիրների լուծման ու ծառայությունների մատուցման և իրենց սոցիալական ապահովության համակարգերի կազմակերպման եղանակները:

#### *Կոմունալ կազմակերպություններ*

*2014 թվականի Կոմունալ Կազմակերպությունների Հրահանգի հոդված 1-ի մեջ ներառված են պետական գնումների հասկացությունը մեկնաբանող նմանատիպ դրույթներ:*

**Նավթի և գազի հետազոտություններն այլևս կարգավորված չեն.** Նավթի և գազի հետազոտման գործունեությունը, որը կարգավորված էր 2004 թվականի Կոմունալ Կազմակերպությունների Հրահանգով, այլևս կարգավորված չէ 2014 թվականի Կոմունալ Կազմակերպությունների Հրահանգով: Դեկլարատիվ բնույթի դրույթ 25-ը բացատրում է, որ այս գործունեության բացառումը տեղին է, քանի որ այն շարունակաբար ենթակա է բավարար մրցակցային ճնշման:

**Հոդված 4. Պատվիրատուները և հատուկ ու բացառիկ իրավունքների սահմանումը.** 2014 թվականի Կոմունալ Կազմակերպությունների Հրահանգը կիրառվում է “պատվիրատուների” նկատմամբ, որոնք կարող են լինել (i) պետական պատվիրատուներ, (ii) հանրային կազմակերպություններ, կամ (iii) կազմակերպություն, որն իրականացնում է որոշակի գործունեություն և գործում է “հատուկ կամ բացառիկ իրավունքների” հիման վրա: “Հատուկ կամ բացառիկ իրավունքների” սահմանումը փոփոխվել և պարզաբանվել է՝ նպատակ ունենալով հստակեցնել 2004 թվականի Հանրային Հատվածի Հրահանգում նախատեսված սահմանման որոշ անորոշություններ: Այժմ հստակ հղում է արված նման հատուկ կամ բացառիկ իրավունքի շնորհման ազդեցությանը, որը “էականորեն ազդում է այլ կազմակերպությունների կողմից նման գործունեություն իրականացնելու կարողության վրա”:

## Հողված 10. Բացառումներ

Ծառայությունների մատուցման պայմանագրերի մի քանի նոր, հատուկ բացառումներ են ներառվել 2014 թվականի Հանրային Հատվածի Հրահանգում: Բացառված պայմանագրերի նոր տեսակները հետևյալն են.<sup>4</sup>

- Իրավաբանական ծառայություններ, ներառյալ՝ իրավաբանական ներկայացուցչության և խորհրդատվության որոշ տեսակներ, նոտարների կողմից փաստաթղթերի հավաստագրման և նույնականացման ծառայություններ, հոգաբարձության և խնամակալության ծառայություններ և պաշտոնական լիազորությունների իրականացման հետ կապված իրավաբանական ծառայություններ:
- Վարկեր - 2004 թվականի Հանրային Հատվածի Հրահանգում ֆինանսական ծառայություններին հղումը 2014 թվականի Հանրային Հատվածի Հրահանգում փոփոխվել և բաժանվել է՝ առանձին հղում տալով ֆինանսական ծառայություններին և վարկերին:
- Քաղաքացիական պաշտպանության, քաղաքացիական պահպանության և վտանգից պաշտպանելու ծառայություններ, որոնք մատուցում են շահույթ չհետապնդող կազմակերպությունները կամ միությունները՝ բացառությամբ հիվանդների տեղափոխման ծառայությունների:
- Հանրային ուղևորափոխադրման ծառայություններ երկաթուղիով կամ մետրոյով – այս ծառայությունների գնումը և տրամադրումը կարգավորված է ԵՄ առանձին ռեժիմով<sup>5</sup>:
- Քաղաքական քարոզարշավի ծառայություններ, որոնք ներառված են գնումների միասնական դասակարգչի (ԳՄԴ) նշված կոդերում:

Որոշակի տեսակի պայմանագրերի համար հետազոտությունների և զարգացման հետ կապված բացառումը սահմանված է հողված 14-ում:

*Կումունալ Կազմակերպություններ: 2014 թվականի Կումունալ Կազմակերպությունների Հրահանգի հողված 21-ը պարունակում է միևնույն նոր բացառությունները, որոնք վերաբերում են իրավաբանական ծառայություններին, վարկերին և քաղաքացիական պաշտպանությանը, պահպանությանը և վտանգներից պաշտպանելու ծառայություններին և երկաթուղու կամ մետրոյի միջոցով հանրային ուղևորափոխադրումների իրականացման ծառայություններին: Այնուամենայնիվ, հողված 21-ը չի պարունակում որևէ հղում քաղաքական քարոզարշավի ծառայություններին: Որոշակի տեսակի պայմանագրերի համար հետազոտությունների և զարգացման հետ կապված բացառումը սահմանված է հողված 32-ում:*

## Հողված 12. Հանրային հատվածի կազմակերպությունների միջև հանրային պայմանագրերը

Հողված 12-ը համակարգում և պարզաբանում է ներքին գործարքներին վերաբերող ԵՄԱԴ նախադեպային իրավունքը: Այն մասնավորեցնում է հանգամանքները, որոնց

<sup>4</sup> Բացառված այս պայմանագրերի բոլոր մանրամասների համար տես հողված 10:

<sup>5</sup> Կանոնակարգ (ԵՀ) No. 1370/2007.

անկայության դեպքում պայմանագրի շնորհումը կհամարվի ներքին գործարքին համարժեք և այսպիսով՝ բացառված կլինի 2014 թվականի Հանրային Հատվածի Հրահանգի կիրառումից: Հոդված 12-ում ներկայացված են երկու տեսակի իրավիճակներ.

- Պայմանագրեր, որոնք շնորհվել են պատվիրատուների կողմից իրենց պատկանող առանձին իրավաբանական անձանց, այս իրավիճակն ընդգրկված է հոդված 12-ի (2) և (3) պարագրաֆներում, որոնք համակարգում և պարզաբանում են *“Teckal”* որոշումից ծագող դեպքերը<sup>6</sup>:
- Համաձայնագրեր պատվիրատուների միջև. հոդված 12-ի (4) պարագրաֆն ընդգրկում է այս իրավիճակը՝ համակարգելով և տարածելով *“Hamburg”* որոշումից ծագող դեպքերի վրա<sup>7</sup>:

Հոդված 12-ի շրջանակներում ընդգրկվելու համար յուրաքանչյուր դեպք պետք է համապատասխանի մի շարք մանրամասն պայմանների:

*Կոմունալ Կազմակերպություններ: 2014 թվականի Կոմունալ Կազմակերպությունների Հրահանգի 28-րդ հոդվածը պարունակում է նմանատիպ դրույթներ: Հոդված 28-ը կիրառվում է միայն այն պատվիրատուների նկատմամբ, որոնք համապատասխանում են պատվիրատուի սահմանմանը:*

*Ի լրումն 2014 թվականի Կոմունալ Կազմակերպությունների Հրահանգի 29-րդ և 30-րդ հոդվածների՝ 28-րդ հոդվածը վերաբերում է փոխկապակցված կազմակերպություններին և համատեղ ձեռնարկություններին պայմանագրերի շնորհմանը: Հոդված 29-ը և 30-ը կիրառվում են բոլոր պատվիրատուների նկատմամբ և շատ նման են դեռևս 2004 թվականի Կոմունալ Կազմակերպությունների Հրահանգում սահմանված դրույթներին:*

## Հոդված 22. Հաղորդակցություն

2014 թվականի Հանրային Հատվածի Հրահանգը հատուկ շեշտ է դնում էլեկտրոնային միջոցների կիրառմամբ հաղորդակցության վրա: Նախնական կանխավարկածն այն է, որ ամբողջ հաղորդակցությունը և տեղեկատվության փոխանակումն իրականացվում է էլեկտրոնային միջոցների կիրառմամբ: Հիմնականում մրցութային գործընթացների նվազագույն ժամկետները հաշվվում են այն կանխավարկածով, որ կիրառվում են էլեկտրոնային միջոցներ:

Հոդված 22-ը նախատեսում է, որ էլեկտրոնային հաղորդակցության համար կիրառվող գործիքները և սարքերը պետք է լինեն ոչ խտրական, հիմնականում հասանելի և փոխգործակցող հիմնականում կիրառվող տեխնոլոգիաների հետ: Այն դեպքում, եթե պատվիրատուները պահանջում են կիրառել հիմնականում ոչ հասանելի գործիքներ, նրանք պետք է առաջարկեն հասանելիության համապատասխան այլընտրանքային միջոցներ:

Որոշ դեպքերում, երբ էլեկտրոնային հաղորդակցությունը պարտադիր չէ հայտերի ներկայացման գործընթացում, կարող են կիրառվել փոստային ծառայությունները կամ այլ ոչ էլեկտրոնային միջոցները: Այս դեպքերը, վերաբերում են օրինակ այն

<sup>6</sup> Տես հղում 3:

<sup>7</sup> Տես հղում 3:

կիրավիճակներին, երբ գնումների մասնագիտացված բնույթից ելնելով՝ կիրառվող գնումների գործիքները, սարքերը կամ ֆայլերի ձևաչափերը հիմնականում հասանելի կամ ապահովված չեն կամ եթե պահանջվելու է խիստ մասնագիտացված գրասենյակային սարքավորում: Այլ դրույթները կարգավորում են առևտրային գաղտնիք պարունակող տեղեկատվության հետ վարվելու պայմանները:

Պատվիրատուներից պահանջվում է ապահովել ողջ հաղորդակցության, տեղեկությունների փոխանակման և պահպանման, տվյալների ամբողջականության և հայտերի ու մասնակցության դիմումների գաղտնիության պահպանումը: Հավելված IV –ում սահմանված են հայտերի էլեկտրոնային ստացման համար կիրառվող գործիքներին և սարքերին վերաբերող նվազագույն պահանջները: Այս պահանջները հիմնականում վերաբերում են թափանցիկության և տվյալների ամբողջականության հարցերին:

**Ոչ պարտադիր դրույթներ.** Անդամ երկրները հնարավորություն ունեն նախատեսելու էլեկտրոնային ստորագրությունների ընդունումը: Հոդված 22 (6)(գ) պարունակում է էլեկտրոնային ստորագրությունների կիրառման հետ կապված մանրամասն դրույթներ:

*Գումունայ Կազմակերպություններ. Նմանատիպ դրույթներ են ներառված 2014 թվականի Գումունայ Կազմակերպությունների Հրահանգի 40-րդ հոդվածում:*

## Վերնագիր II – Պետական պայմանագրերին վերաբերող կանոններ

### Հոդված 26. Ընթացակարգի ընտրությունը

2014 թվականի Հանրային Հատվածի Հրահանգը պարունակում է հինգ մրցակցային ընթացակարգ և մեկ ոչ մրցակցային ընթացակարգ: Հինգ մրցակցային ընթացակարգերն են.

1. Բաց ընթացակարգ
2. Սահմանափակ ընթացակարգ
3. Բանակցությամբ մրցակցային ընթացակարգ
4. Մրցակցային երկխոսություն
5. Նորարարական գործընկերություն

Բանակցությամբ մրցակցային ընթացակարգը էականորեն փոփոխվել է: Նորարարական գործընկերության ընթացակարգը նոր է:

Ոչ բանակցային ընթացակարգը բանակցային ընթացակարգն է՝ առանց հայտարարության հրապարակման:

Տես սույն ընթացակարգերի վերաբերյալ ստորև ներկայացված հետագա մեկնաբանությունները:

**Բաց կամ սահմանափակ ընթացակարգերի ընտրությունը.** Բաց և սահմանափակ ընթացակարգերը դեռևս այն հիմնական ընթացակարգերն են, որոնք կարող են



ազատորեն օգտագործվել պատվիրատուների կողմից՝ առանց պայմաններ բավարարելու պահանջի:

**Մրցակցային ընթացակարգի կիրառման պայմանները, երբ բանակցությունը թույլատրված է.** 2004 թվականի հրահանգների համաձայն՝ պայմանները, որոնք պետք է բավարարելին պատվիրատուները հայտարարության հրապարակմամբ բանակցային ընթացակարգը կամ մրցակցային երկխոսության ընթացակարգը կիրառելու համար, տարբեր էին:

2014 թվականի հրահանգների համաձայն՝ բանակցությամբ մրցակցային ընթացակարգի և մրցակցային երկխոսության ընթացակարգի պայմանները նույնն են: Այս պայմանները փոփոխվել են և ավելացվել են նոր պայմաններ: Պայմանները վերաբերում են աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման և ապրանքների մատակարարման պայմանագրերին:

Այդ պայմանները կարելի է ավելի հեշտ բավարարել, քան 2004 թվականի հրահանգների դեպքում: Դեկլարատիվ բնույթի դրույթ 42-ը բացատրում է, որ պատվիրատուները պետք է ունենան ավելի շատ ճկունություն՝ ընտրելու գնման ընթացակարգ, որը նախատեսում է բանակցություններ: Դեկլարատիվ բնույթի դրույթ 42-ը շարունակում է բացատրել, որ ճկունությունն ամենայն հավանականությամբ կմեծացնի միջսահմանային առևտուրը:

Ամփոփ, բանակցությամբ մրցակցային ընթացակարգի կիրառման պայմանները հետևյալն են.

- Պատվիրատուի կարիքները չեն կարող բավարարվել առանց հասանելի լուծումների հարմարեցման:
- Աշխատանքները, ծառայությունները կամ ապրանքները ներառում են դիզայն կամ նորարարական լուծումներ:
- Պայմանագիրը չի կարող շնորհվել առանց նախնական բանակցությունների՝ բնույթի, բարդության, կամ իրավական և ֆինանսական հատկանիշների հետ կապված որոշակի հանգամանքների կամ դրանց հետ կապված ռիսկի պատճառով:
- Տեխնիկական մասնագրերը չեն կարող սահմանվել բավարար ճշգրտությամբ՝ հիմնվելով սահմանված չափանիշների կամ տեխնիկական մասնագրերի վրա:
- Բաց կամ սահմանափակ ընթացակարգի ժամանակ ներկայացվել են միայն անկանոն կամ անընդունելի հայտեր: Սահմանված են անկանոն կամ անընդունելի հայտերի օրինակներ:

### **Կոմունալ Կազմակերպություններ**

2014 թվականի Կոմունալ Կազմակերպությունների Հրահանգը *ևս ունի հինգ մրցակցային ընթացակարգ: Ընթացակարգերը նույնն են, ինչ 2014 թվականի Հանրային Հատվածի Հրահանգում թվարկվածները՝ բացառությամբ երրորդ ընթացակարգի, որը 2014 թվականի Կոմունալ Կազմակերպությունների Հրահանգում դեռևս կոչվում է “նախնական մրցակցությամբ բանակցային ընթացակարգ”, ինչպես 2004 թվականի Կոմունալ Կազմակերպությունների Հրահանգում: Որոշակի ընթացակարգերի կիրառման եղանակներն ավելի ձկուն են, քան 2014 թվականի Հանրային Հատվածի Հրահանգում, ինչն այդպես էր նաև 2004 թվականի հրահանգներում:*

**Հոդված 44.** Պատվիրատուներն ազատ են ընտրել բաց, սահմանափակ կամ նախնական մրցակցությամբ բանակցային ընթացակարգը: Այս տարբերակները նույնն են, ինչ 2004 թվականի Կոմունալ Կազմակերպությունների Հրահանգում:

Անդամ երկրները պետք է ապահովեն նաև պատվիրատուների կողմից մրցակցային երկխոսության կամ նորարարական գործընկերության ընթացակարգերը կիրառելու ազատությունը: Գոյություն չունեն պայմաններ այս մրցակցային ընթացակարգերի կիրառման համար, որտեղ թույլատրված են բանակցությունները:

Հետևաբար, պատվիրատուներն ազատ են ընտրել այս հինգ ընթացակարգերից ցանկացածը: Ենթադրվում է, որ նորարարական գործընկերության ընթացակարգը կարող է կիրառվել միայն, երբ գնվում են նորարարական ապրանքներ, ծառայություններ կամ աշխատանքներ:

### **Մրցակցային ընթացակարգերի իրականացումը – Հոդված 27-31**

2014 թվականի Հանրային Հատվածի Հրահանգը մրցակցային ընթացակարգերի իրականացումը կարգավորող դրույթները սահմանելիս մի փոքր այլ դիրքորոշում է ընդունել՝ ի համեմատություն 2004 թվականի Հանրային Հատվածի Հրահանգի: 2014 թվականի Հանրային Հատվածի Հրահանգում առանձին ընթացակարգին վերաբերող հոդվածը հղում է պարունակում այդ ընթացակարգի նվազագույն նորմատիվ ժամկետներին: Այս դրույթը նշանակում է, որ առանձին ընթացակարգերին վերաբերող պահանջներին ավելի հեշտ է հետևել, քան 2004 թվականի Հանրային Հատվածի Հրահանգի դեպքում, երբ տարբեր ընթացակարգերին վերաբերող ժամկետները համախմբված էին միևնույն հոդվածում:


*Կոմունալ կազմակերպություններ. Նմանատիպ մոտեցում է կիրառվել 2014 թվականի Կոմունալ Կազմակերպությունների Հրահանգի հոդվածներ 45-49-ում:*

### **Հոդված 27. Բաց ընթացակարգ**

Բաց ընթացակարգի իրականացման հետ կապված հիմնական փոփոխությունը հայտերի ներկայացման ավելի կարճ նորմատիվ ժամկետների սահմանումն է, որն այժմ կազմում է հայտարարությունը *ԵՄՊՏ* ուղարկելու օրից 35 օր: Նվազագույն ժամկետները կրճատվել են՝ դառնալով 30 օր, եթե հնարավորություն կա հայտերը ներկայացնել էլեկտրոնային եղանակով: 2004 թվականի Հանրային Հատվածի Հրահանգի համաձայն՝ նվազագույն ժամկետը 52 օր էր:

Եթե պատվիրատուները հրապարակում են **նախնական տեղեկատվության հայտարարություն (ՆՏՀ)**, նվազագույն ժամկետները կարող են կրճատվել մինչև 15 օր, սակայն միայն այն դեպքում, երբ ողջ պահանջվող տեղեկատվությունը ներառված է ՆՏՀ-ում և եթե ՆՏՀ-ն ուղարկվել է հրապարակման հայտարարության ուղարկումից առաջ 35 օրվա և 12 ամսվա միջև ընկած ժամանակահատվածում: Նվազագույն ժամկետը 2004 թվականի Հանրային Հատվածի Հրահանգի համաձայն նման դեպքերում 22 օր էր:

**Ընթացակարգի աղյուսակ – Բաց ընթացակարգ՝ Նախնական Տեղեկատվության Հայտարարության (ՆՏՀ) հրապարակմամբ**



Անհետաձգելիություն: Անհետաձգելիության դեպքում հայտերի ներկայացման 35-օրյա ժամկետը կարող է նվազեցվել և կազմել հայտարարության ուղարկումից ոչ պակաս, քան 15 օրը:

**Կոմունալ Կազմակերպություններ**

2014 թվականի Կոմունալ Կազմակերպությունների Հրահանգի հոդված 45-ը պարունակում է համանման դրույթներ՝ հայտերի ներկայացման համար կրճատված՝ 35-օրյա ժամկետով: Նվազագույն ժամկետը կարող է նվազեցվել մինչև 15 օր, եթե կիրառվել է պարբերական հայտարարություն: Տես պարբերական ցուցադրական հայտարարության վերաբերյալ մեկնաբանությունը ստորև:

Ժամկետը կարող է նվազեցվել մինչև 15 օր միայն, եթե ողջ պահանջվող տեղեկությունները սահմանվել են պարբերական ցուցադրական հայտարարության մեջ և եթե ցուցադրական հայտարարությունն ուղարկվել է հրապարակման հայտարարության ուղարկումից առաջ 35 օրվա և 12 ամսվա միջև ընկած ժամանակահատվածում:

Կիրառվում են անհետաձգելիությանը վերաբերող նույն դրույթները, ինչ 2014 թվականի Հանրային Հատվածի Հրահանգում:

**Մեկնաբանություն.** 2004 թվականի Կոմունալ Կազմակերպությունների Հրահանգում **պարբերական ցուցադրական հայտարարությունը** ներառված էր որպես այլընտրանք և հայտարարման ավելի ճկուն ձև, քան հայտարարության

հրապարակումն է: 2004 թվականի Կոմունալ Կազմակերպությունների Հրահանգի համաձայն՝ պատվիրատուներին թույլատրված էր հրապարակել պարբերական ցուցադրական հայտարարություն ԵՄՊՏ-ում բյուջետային տարվա սկզբում: Պարբերական ցուցադրական հայտարարությունը կարող էր ներառել պատվիրատուի կողմից գալիք բյուջետային տարվա համար պլանավորած ողջ գնումները: Պարբերական ցուցադրական հայտարարությունը ԵՄՊՏ-ում միակ պահանջվող հայտարարությունն էր: Ոչ մի հետագա հրապարակում կամ հայտարարություն (մրցույթի հրավեր) չէր պահանջվում՝ պարբերական ցուցադրական հայտարարության մեջ ներառված գնումների համար: Պարբերական ցուցադրական հայտարարության կիրառումը պահպանվեց 2014 թվականի Կոմունալ Կազմակերպությունների Հրահանգում:

2014 թվականի Հանրային Հատվածի Հրահանգը փոփոխվել է՝ ներառելու նմանատիպ, ոչ պարտադիր դրույթ՝ թույլատրելով Նախնական Տեղեկատվության Հայտարարության (ՆՏՀ) կիրառումը որպես մրցույթի հրավեր՝ մինչև 12 ամսվա ընթացքում իրականացվող գնումների համար: Այս ոչ պարտադիր դրույթը հասանելի է միայն որոշակի պատվիրատուների: Տես «ՆՏՀ-ն որպես մրցույթի հրավեր» հոդված 48-ի մեկնաբանությունը ստորև:


**Հոդված 28. Սահմանափակ ընթացակարգ**

Սահմանափակ ընթացակարգի իրականացման հիմնական փոփոխությունը նվազեցված նորմատիվ ժամկետների սահմանումն է:

**Սահմանափակ ընթացակարգ՝ առանց ՆՏՀ.** Մասնակցության դիմումների ներկայացման և մասնակիցների կողմից ընտրության փուլի տեղեկությունների տրամադրման նվազագույն ժամկետը այժմ 30 օր է՝ հաշված հայտարարությունը ԵՄՊՏ ուղարկելու օրից:


Հայտերի ներկայացման ժամկետն այժմ 30 օր է՝ հաշված հրավերն ուղարկելու օրից: Նվազագույն ժամկետը կարող է կրճատվել մինչև 25 օր, եթե հնարավորություն կա հայտերը ներկայացնել էլեկտրոնային եղանակով: 2004 թվականի Հանրային Հատվածի Հրահանգի համաձայն՝ հայտերի ներկայացման նվազագույն ժամկետը 40 օր էր:

**Ընթացակարգի աղյուսակ – Սահմանափակ ընթացակարգ՝ առանց ՆՏՀ**



**Սահմանափակ ընթացակարգ՝ ստանդարտ ՆՏՀ-ի հրապարակմամբ.** Եթե պատվիրատուները հրապարակում են ստանդարտ նախնական տեղեկատվության հայտարարություն (ՆՏՀ), հայտերի ներկայացման ժամկետները կարող են կրճատվել մինչև 10 օր: Ժամկետները կարող են կրճատվել միայն, եթե պահանջվող ողջ տեղեկատվությունը սահմանված է ՆՏՀ-ում և եթե ՆՏՀ-ն ուղարկվել է հրապարակման հայտարարության ուղարկումից առաջ 35 օրվա և 12 ամսվա միջև ընկած ժամանակահատվածում:

**Ընթացակարգի աղյուսակ – Սահմանափակ ընթացակարգ ստանդարտ ՆՏՀ հրապարակմամբ**



## Ոչ պարտադիր դրույթներ՝ կապված հայտարարման և նվազագույն ժամկետների հետ

Անդամ երկրները կարող են ընդունել երկու ոչ պարտադիր դրույթներ՝ կապված մրցույթի հրավերների և նվազագույն ժամկետների հետ:

- **ՆՏՀ-ն որպես մրցույթի հրավեր.** Այս դրույթի վերաբերյալ տեղեկությունների համար տես հոդված 48-ի մեկնաբանությունը ստորև:
- **Սահմանափակ ընթացակարգում (Հոդված 28 (4)) և բանակցությամբ մրցակցային ընթացակարգում (Հոդված 29 (1)) հայտերի ներկայացման ավելի կարճ ժամկետների համաձայնություն.** Պետական կառավարարման ոչ կենտրոնական մարմիններ հանդիսացող պատվիրատուները կարող են սահմանել հայտերի ներկայացման վերջնաժամկետներ՝ ընտրված բոլոր թեկնածուների հետ փոխադարձ համաձայնությամբ: Համաձայնության բացակայության դեպքում հայտերի ներկայացման նվազագույն ժամկետը 10 օր է: Պետական կառավարարման ոչ կենտրոնական մարմիններ հանդիսացող պատվիրատուներն այն պատվիրատուներն են, որոնք չեն հանդիսանում Հավելված 1-ում նշված պետական կառավարման կենտրոնական մարմիններ: Տես պետական կառավարման մարմին հանդիսացող պատվիրատուների մասին մեկնաբանությունը ստորև:

**Մեկնաբանություն.** Հավելված 1-ում նշված **պետական կառավարման մարմին հանդիսացող պատվիրատուները** Առևտրի Համաշխարհային Կազմակերպության Պետական Գնումների Համաձայնագրում (ՊԳՀ) ընդգրկված պատվիրատուներն են: 2014 թվականի Հանրային Հատվածի Հրահանգի որոշ ոչ պարտադիր դրույթներ կիրառելի չեն պետական կառավարման մարմին հանդիսացող պատվիրատուների նկատմամբ, քանի որ այս դրույթները համապատասխանեցված չեն ՊԳՀ պահանջերին: ՊԳՀ-ին ենթակա և ոչ ենթակա պատվիրատուների միջև տարբերությունը արտացոլված է նաև ծառայությունների մատուցման և ապրանքների մատակարարման պայմանագրերի ֆինանսական շեմերի մեջ: Ավելի ցածր ֆինանսական շեմ կիրառվում է ծառայությունների մատուցման և ապրանքների մատակարարման այն պայմանագրերի համար, որոնք շնորհվել են պետական կառավարման մարմին հանդիսացող պատվիրատուների կողմից, քան այն պայմանագրերի, որոնք շնորհվել են ՊԳՀ-ին ոչ ենթակա պատվիրատուների կողմից:

### *Կոմունալ կազմակերպություններ*

*Սահմանափակ ընթացակարգի ժամկետները. 2004 թվականի Կոմունալ Կազմակերպությունների Հրահանգի համաձայն՝ պատվիրատուները կարող էին համաձայնության գալ տնտեսվարող սուբյեկտների հետ՝ մասնակցության դիմումների ժամկետների հետ կապված՝ պահպանելով ընդհանուր կանոնը և նվազագույն ժամկետները: Նրանք նաև կարող էին համաձայնության գալ հայտերի ընդունման ավելի կարճ ժամկետների շուրջ: 2014 թվականի Կոմունալ Կազմակերպությունների Հրահանգի հոդված 46-ը պահպանում է ավելի կարճ ժամկետների այս մոտեցումը հետևյալ կերպ.*

- *մասնակցության դիմումներ. հիմնականում 30 օր, բայց ոչ պակաս, քան 15 օր;*
- *հայտերի ընդունում: փոխադարձ համաձայնությամբ կամ*

*համաձայնության բացակայությամբ՝ 10 օր:*

*2014 թվականի Հանրային Հատվածի Հրահանգի՝ պետական կառավարման կենտրոնական մարմիններ չհանդիսացող պատվիրատուներին վերաբերող ոչ պարտադիր դրույթը ներառված չէ 2014 թվականի Կոմունալ Կազմակերպությունների Հրահանգում:*

## **Հոդված 29. Բանակցությամբ մրցակցային ընթացակարգ**

2004 թվականի Հանրային Հատվածի Հրահանգի հոդված 30-ում սահմանված “հայտարարության հրապարակմամբ բանակցային ընթացակարգը” 2014 թվականի Հանրային Հատվածի Հրահանգում փոխարինվել է “բանակցությամբ մրցակցային ընթացակարգով”: Ինչպես փոխարինված ընթացակարգը, բանակցությամբ մրցակցային ընթացակարգը ևս երկու փուլ ունեցող ընթացակարգ է, որն սկսում է մրցույթի հրավերով: Այնուամենայնիվ, բանակցությամբ մրցակցային ընթացակարգն ավելի խիստ է կանոնակարգված: Օրինակ՝ հատուկ դրույթները վերաբերում են հետևյալին.

- մասնակցության դիմումների ներկայացման վերջնաժամկետ. 30 օր;
- նախնական հայտերի ստացման նվազագույն ժամկետ. 30 օր կամ 25 օր, եթե հնարավորություն կա հայտերը ներկայացնել էլեկտրոնային եղանակով:
- անհետաձգելի ընթացակարգեր;
- **Ոչ պարտադիր դրույթներ՝** Նախնական Տեղեկատվության Հայտարարության (ՆՏՀ)՝ որպես հրավերի կիրառման և հայտերի վերադարձման ժամկետների համաձայնության վերաբերյալ;
- գնումների փաստաթղթերի բովանդակությունը, ներառյալ՝ բոլոր մասնակիցների կողմից բավարարման ենթակա նվազագույն պայմանների և այդ տեղեկությունների ներկայացման ձևի սահմանման պարտավորություն;
- բանակցությունները թույլատրված են՝ բավարարելու նախնական և հետագա հայտերը՝ պայմանով, որ նվազագույն պահանջները չեն կարող բանակցվել և որ բոլոր մասնակիցների համար կապահովվի հավասար վերաբերմունք;
- թափանցիկության հետ կապված դրույթներ՝ տեխնիկական մասնագրերում կամ գնումների այլ փաստաթղթերում կատարված ցանկացած փոփոխության մասին մասնակիցներին տեղեկացնելու վերաբերյալ;
- գործընթացի իրականացումը հաջորդական փուլերով և գործընթացի ընթացքում մասնակիցների թվի կրճատման հնարավորություն՝ հրապարակված շնորհման չափորոշիչների կիրառմամբ;
- վերջնական հայտերի ստացումից հետո բանակցություններն արգելված են;
- առանց բանակցությունների շնորհման հնարավորություն, եթե նման շնորհումը նշված է եղել մրցույթի հրավերում:

### **Կոմունալ Կազմակերպություններ**

2014 թվականի Կոմունալ Կազմակերպությունների Հրահանգի հոդված 47-ը սահմանում է “մրցույթի նախնական հրավերով բանակցային ընթացակարգի” վերաբերյալ կանոններ: Կանոններն ավելի ճկուն են, քան 2014 թվականի Հանրային Հատվածի Հրահանգի կանոնները, ինչն այդպես էր նաև 2004 թվականի Հրահանգների դեպքում:

2014 թվականի Կոմունալ Կազմակերպությունների Հրահանգում ժամկետներն ավելի կարճ են, քան 2004 թվականի Կոմունալ Կազմակերպությունների Հրահանգում: Մասնակցության դիմումների ներկայացման ժամկետը հիմնականում 30 օր է, սակայն ցանկացած դեպքում, ոչ պակաս, քան 15 օրը: Հայտերի ներկայացման ժամկետը կարող է սահմանվել փոխադարձ համաձայնությամբ. համաձայնության բացակայության դեպքում ժամկետը 10 օր է: Վերջնական հայտի ներկայացումից հետո բանակցություններն ավարտվում են:

### **Հոդված 30. Մրցակցային երկխոսություն**

Փոփոխվել են մրցակցային երկխոսության իրականացման մասնավորապես այն դրույթները, որոնք վերաբերում են հետևյալին. (i) որքանով է թույլատրված վերջնական հայտերի փոփոխությունը և (ii) լավագույն հայտ ներկայացրած մասնակցի հետ թույլատրվող բանակցությունների բնույթը:

Երկխոսության ավարտից հետո ներկայացված վերջնական հայտերը կարող են “պատվիրատուի պահանջով պարզաբանվել, հստակեցվել կամ օպտիմիզացվել”: Թվում է, այս բառակապակցությունն ավելի շատ փոփոխություններ է թույլատրում, քան 2004 թվականի Հանրային Հատվածի Հրահանգը, որը թույլատրում էր “պարզաբանել, հստակեցնել կամ բարելավել” հայտը:

“Հետմրցութային” բանակցությունները հստակորեն թույլատրված են այն մասնակցի հետ, որ ներկայացրել է լավագույն հայտը: Այս բանակցությունները “կարող են իրականացվել՝ հայտում պարունակվող ֆինանսական պարտավորությունների կամ այլ պայմանների հաստատման համար՝ վերջնականացնելով պայմանագրի պայմանները”: Հետմրցութային բանակցությունները չպետք է էականորեն փոխեն հայտի հիմնական պայմանները և չպետք է պարունակեն մրցակցության խախտման ռիսկ կամ հանգեցնեն խտրականության:

**Կոմունալ Կազմակերպություններ. 2014 թվականի Կոմունալ Կազմակերպությունների Հրահանգի հոդված 48-ը պարունակում է նմանատիպ դրույթներ:**

### **Հոդված 31. Նորարարական գործընկերություն**

Նորարարական գործընկերությունը նոր հայեցակարգ է և նոր ընթացակարգ: Նորարարական գործընկերությունները նախատեսված են որպես երկարաժամկետ գործընկերություններ, որոնք թույլատրում են նոր և նորարարական ապրանքների, ծառայությունների կամ աշխատանքների մշակում և հետագա գնում: Նորարարական գործընկերությունը մեկ գործընթացում համատեղում է (i) նորարարության մեկ կամ մի քանի գործընկերների նշանակում; (ii) զուգահեռ



նորարարական զարգացման աշխատանք, որտեղ ներգրավված է նորարարության ավելի, քան մեկ գործընկեր; (iii) գործընթացի ընթացքում գործընկերների թվի կրճատում, եթե սկզբում եղել են ավելի, քան մեկ գործընկերներ; և (iv) նորարարական գործընկերության արդյունքում ստեղծված ապրանքների, ծառայությունների կամ աշխատանքների գնման հնարավորություն պատվիրատուի համար: “Նորարարությունը” սպառիչ կերպով սահմանված չէ 2014 թվականի Հանրային Հատվածի Հրահանգում:

Նորարարական գործընկերությունը պետք է հայտարարվի *ԵՄՊՏ*-ում՝ հայտարարության հրապարակման տեսքով: Մասնակցության դիմումների ներկայացման նվազագույն նորմատիվ ժամկետը 30 օր է: Նորարարական գործընկերության ընթացակարգով գնում կատարող պատվիրատուն այնուհետև ունի մի քանի տարբերակ՝ գնման գործընթացն իրականացնելու և նորարարական գործընկերությունների ընթացիկ պայմանավորվածությունները սահմանելու հարցում: Այս տարբերակները սահմանված են հոդված 31-ում:

*Կոմունալ Կազմակերպություններ. 2014 թվականի Կոմունալ Կազմակերպությունների Հրահանգի հոդված 49-ը պարունակում է նմանատիպ դրույթներ, սակայն ավելի կրճատ՝ 15 օր նվազագույն ժամկետով:*

**Հոդված 32. Առանց հայտարարության հրապարակման բանակցային ընթացակարգի կիրառումը**

Առանց հայտարարության հրապարակման բանակցային ընթացակարգի կիրառման հիմքերը փոփոխվել են: Ստորև ներկայացված աղյուսակը համեմատում է 2004 թվականի Հանրային Հատվածի Հրահանգում և 2014 թվականի Հանրային Հատվածի Հրահանգում առկա հիմքերը:

*Կոմունալ Կազմակերպություններ. Աղյուսակը նաև պարունակում է հղումներ 2004 և 2014 թվականների Կոմունալ Կազմակերպությունների Հրահանգների դրույթներին:*

| <b>Առանց հայտարարության հրապարակման բանակցային ընթացակարգի կիրառման հիմքերը</b>   |  |
|---|--|
| <b>2004 թվականի Հանրային Հատվածի Հրահանգ Հոդված 31</b><br><br><i>2004 թվականի Կոմունալ Կազմակերպությունների Հրահանգ հոդված 40</i>   | <b>2014 թվականի Հանրային Հատվածի Հրահանգ Հոդված 32</b><br><i>Նշված հիմնական տարբերություններով</i><br><br><i>2014 թվականի Կոմունալ Կազմակերպությունների Հրահանգ հոդված 50</i>  |
| <b>Հ.31(1)(ա) չկա հայտ կամ համապատասխան հայտ կամ համապատասխան դիմում</b> <ul style="list-style-type: none"> <li>աշխատանքների կատարման, ապրանքների մատակարարման և ծառայությունների մատուցման պայմանագրեր</li> <li>բաց և սահմանափակ ընթացակարգեր</li> </ul> <i>Կոմունալ Կազմակերպություններ Հ.40(3)(ա)</i>          | <b>→ Հ.32(2)(ա)</b> <ul style="list-style-type: none"> <li><i>այժմ բացատրություն է տրված, թե երբ է հայտը կամ մասնակցության դիմումը համարվում անհամապատասխան</i></li> </ul> <i>Կոմունալ Կազմակերպություններ Հ.50(ա)</i>   |
| <b>Հ.31(1)(բ) տեխնիկական կամ գեղարվեստական պատճառներով կամ բացառիկ իրավունքների պաշտպանության հետ կապված պատճառներով</b> <ul style="list-style-type: none"> <li>աշխատանքների կատարման, ապրանքների մատակարարման և ծառայությունների մատուցման պայմանագրեր</li> </ul> <i>Կոմունալ Կազմակերպություններ Հ.40(3)(գ)</i> | <b>→ Հ.32(2)(բ) –վերափոխված</b> <ul style="list-style-type: none"> <li><i>“գեղարվեստական” պատճառը ընդլայնվել է</i></li> <li><i>նոր հիմքեր “եթե մրցակցությունը տեխնիկական պատճառներով բացակայում է”</i></li> <li><i>նոր պայմաններ. մրցակցության բացակայության հիմքը կիրառվում է միայն, եթե չկա ողջամիտ այլընտրանք կամ փոխարինում կամ առկա չէ գնումների արհեստական նեղացում</i></li> </ul> <i>Կոմունալ Կազմակերպություններ Հ.50(գ)</i> |
| <b>Հ.31(1)(գ) ծայրահեղ անհետաձգելիություն անկանխատեսելի իրադարձությունների պատճառով</b> <ul style="list-style-type: none"> <li>աշխատանքների կատարման, ապրանքների մատակարարման և ծառայությունների</li> </ul>   | <b>→ Հ.32(2)(գ)</b><br><br><i>Կոմունալ Կազմակերպություններ Հ.50(դ)</i>   |

|  |   |   |
|--|---|---|
| <p>մատուցման պայմանագրեր<br/><i>Կոմունալ Կազմակերպություններ</i><br/>Հ.40(3)(դ)</p>  |   |   |
| <p><b>Հ.31(2)(ա) հետազոտություն, փորձարարություն, ուսումնասիրություն կամ զարգացում</b><br/>• ծառայությունների մատուցման պայմանագրեր<br/><i>Կոմունալ Կազմակերպություններ</i><br/>Հ.40(3)(բ)</p> | ➔ | <p><b>Հ.32(3)(ա)</b><br/><br/><i>Կոմունալ Կազմակերպություններ</i><br/>Հ.50(բ)</p>   |
| <p><b>Հ.31(2)(բ) լրացուցիչ մատակարարում՝ որպես մասնակի փոխարինում կամ երկարաձգում</b><br/>• ապրանքների մատակարարման պայմանագրեր<br/><i>Կոմունալ Կազմակերպություններ</i><br/>Հ.40(3)(ե)</p>     | ➔ | <p><b>Հ.32(3)(բ)</b><br/><br/><i>Կոմունալ Կազմակերպություններ</i><br/>Հ.50(ե)</p>   |
| <p><b>Հ.31(2)(գ) ապրանքային բորսա</b><br/>• ապրանքների մատակարարման պայմանագրեր<br/><br/><i>Կոմունալ Կազմակերպություններ</i><br/>Հ.40(3)(ը)</p>  | ➔ | <p><b>Հ.32(3)(գ)</b><br/><br/><br/><i>Կոմունալ Կազմակերպություններ</i><br/>Հ.50(է)</p>  |
| <p><b>Հ.31(2)(դ) շահավետ պայմաններ</b><br/>• ապրանքների մատակարարման պայմանագրեր<br/><i>Կոմունալ Կազմակերպություններ</i><br/>Հ.40(3)(ի)</p>  | ➔ | <p><b>Հ.32(3)(դ)</b><br/><br/><i>Կոմունալ Կազմակերպություններ</i><br/>Հ.50(թ)</p>   |
| <p><b>Հ.31(3) դիզայնի մրցույթ</b><br/>• ծառայությունների մատուցման պայմանագրեր<br/><i>Կոմունալ Կազմակերպություններ</i><br/>Հ.40(3)(լ)</p>  | ➔ | <p><b>Հ.32(4)</b><br/><br/><i>Կոմունալ Կազմակերպություններ</i><br/>Հ.50(ժ)</p>  |
| <p><b>Հ.31(4)(ա) լրացուցիչ չնախատեսված պահանջներ</b>, եթե առկա է տեխնիկական բարդություն<br/>• աշխատանքների կատարման և ծառայությունների մատուցման պայմանագրեր</p>                               | ➔ | <p>տեղափոխվել է <b>Հ.72(1)(բ)</b> պայմանագրերի փոփոխություններ վերջիններիս գործողության ընթացքում և փոփոխվել է <i>Տես ստորև Հ. 89(1)(բ) տեղափոխված հոդված 72-ի վերաբերյալ</i></p> |

|  |          |   |
|--|----------|---|
| <p><i>Կոմունալ Կազմակերպություններ</i><br/><b>Հ.40(3)(գ)</b></p>   |          | <p><i>մեկնաբանությունը</i></p>  |
| <p><b>Հ.31(4)(բ) նմանատիպ պահանջների կրկնություն</b></p> <ul style="list-style-type: none"> <li>աշխատանքների կատարման և ծառայությունների մատուցման պայմանագրեր</li> </ul> <p><i>Կոմունալ Կազմակերպություններ</i><br/><b>Հ.40(3)(է)</b></p> | <p>➔</p> | <p><b>Հ.32(5)</b><br/><i>փոփոխվել է՝ հիմնական ծրագրում հնարավոր հավելյալ պահանջների վերաբերյալ ցուցումի ներառման պահանջի հստակեցման համար</i></p> <p><i>Կոմունալ Կազմակերպություններ</i><br/><b>Հ.50(գ)</b></p> |
| <p><i>Կոմունալ Կազմակերպություններ</i><br/><b>Հ.40(3)(ժ) շահավետ գնումներ</b><br/><b>Ծանոթագրություն.</b> Այս հիմքերն առկա չէին 2004 թվականի Հանրային Հատվածի Հրահանգում:</p>  | <p>➔</p> | <p><i>Կոմունալ Կազմակերպություններ</i><br/><b>Հ.50(բ)</b><br/><b>Ծանոթագրություն.</b> Այս հիմքերն առկա չէին 2014 թվականի Հանրային Հատվածի Հրահանգում:</p>   |

**Հոդված 33. Շրջանակային համաձայնագրեր**

Շրջանակային համաձայնագրերին վերաբերող դրույթները խստացվել են՝ պահանջելով ավելի շատ թափանցիկություն, մասնավորապես. (i) շրջանակային համաձայնագրին անդամակցող պատվիրատուի նույնականացման; և (2) շրջանակային համաձայնագրերի ներքո պայմանագրերի շնորհման եղանակների հետ կապված որոշումների ընդունման հիմքերի վերաբերյալ:

*Կոմունալ Կազմակերպություններ. Հոդված 51-ը ևս ներառում է թափանցիկության պահանջներ և սահմանում է, որ շրջանակային համաձայնագրերը հիմնականում չպետք է գերազանցեն ութ տարին: 2004 թվականի Կոմունալ Կազմակերպությունների Հրահանգում առավելագույն ժամկետ սահմանված չէր:*

**Հոդված 37. Գնումների կենտրոնացված գործունեություն և գնումների կենտրոնական մարմիններ**

2014 թվականի Հանրային Հատվածի Հրահանգում կենտրոնացված գնումների վերաբերյալ ավելի ծավալուն դրույթներ են ներառված, քան 2004 թվականի Հանրային Հատվածի Հրահանգում: 2014 թվականի Հանրային Հատվածի Հրահանգը սահմանում է երկու նոր եզրույթ՝ “գնումների կենտրոնացված գործունեություն” և “գնումների օժանդակ գործունեություն”: 2014 թվականի Հանրային Հատվածի Հրահանգում գնումների կենտրոնացված գործունեության սահմանումը հիմնված է 2004 թվականի Հանրային Հատվածի Հրահանգում գնումների կենտրոնական մարմնի սահմանման վրա: Գնումների օժանդակ գործունեության սահմանումը ամբողջովին նոր է:

**Ոչ պարտադիր դրույթներ.** Անդամ երկրները հնարավորություն ունեն պատվիրատուներին թույլատրել ձեռք բերելու հետևյալը.

- ապրանքներ և/կամ ծառայություններ գնումների կենտրոնական մարմնից, այսպիսով հնարավորություն տալով կենտրոնական մարմիններին իրականացնել պահեստավորման ծառայություններ՝ վաճառելով անմիջականորեն պատվիրատուներին:
- աշխատանքներ, ապրանքներ և ծառայություններ՝ օգտագործելով կենտրոնական մարմնի կողմից շնորհված պայմանագրերը կամ շրջանակային համաձայնագրերը կամ ստեղծված գնումների դինամիկ համակարգերը:

**Ոչ պարտադիր դրույթներ.** Անդամ երկրները հնարավորություն ունեն նաև պահանջելու, որպեսզի որոշակի տեսակի գնումներ իրականացվեն գնումների կենտրոնական մարմինը կամ մարմինները օգտագործելով:

2014 թվականի Հանրային Հատվածի Հրահանգի հոդված 37 (2) հաստատում է, որ պատվիրատուն իրականացնում է իր պարտականությունները, երբ.

- գնում է ապրանքներ կամ ծառայություններ գնումների կենտրոնական մարմնից;
- օգտագործում է գնումների կենտրոնական մարմնի կողմից ստեղծված գնումների դինամիկ համակարգերը և շրջանակային համաձայնագրերը:

2014 թվականի Հանրային Հատվածի Հրահանգի համաձայն՝ պատվիրատուները, այնուամենայնիվ, պատասխանատու են այս ընթացակարգերի՝ իրենց կողմից իրականացվող մասերի հետ կապված պարտավորությունների կատարման համար: Պատվիրատուն պատասխանատու է, երբ այն.

- շնորհում է պահմանագիր գնումների դինամիկ համակարգի ներքո;
- վերաբացում է մրցույթը շրջանակային համաձայնագրի ներքո;
- որոշում է, թե որ մասնակցին պետք է շնորհվի պայմանագիրը, երբ մրցույթը շրջանակային համաձայնագրի ներքո վերաբացված է:

Շեշտը դրված է էլեկտրոնային գնումների կարևորության վրա: Նոր պահանջը սահմանում է, որ գնումների կենտրոնական մարմնի կողմից կատարվող բոլոր գնումները պետք է իրականացվեն էլեկտրոնային միջոցների կիրառմամբ (հոդված 37 (3)):

Նոր դրույթները վերաբերում են “գնումների օժանդակ գործունեությանը”: Գնումների օժանդակ գործունեությունն այն գործունեությունն է, որն աջակցում է գնման գործունեությանը, ինչպիսին է օրինակ տեխնիկական ենթակառուցվածքի տրամադրումը, պետական գնումների գործունեության իրականացման կամ կազմակերպման վերաբերյալ խորհրդատվությունը և գնումների գործընթացի նախապատրաստումը և ղեկավարումը: Պատվիրատուները կարող են այս գործունեությունն իրականացնելու համար պայմանագրեր շնորհել գնումների կենտրոնական մարմնին՝ առանց 2014 թվականի Հանրային Հատվածի Հրահանգում սահմանված ընթացակարգերը կիրառելու:

*Գումունայ Կազմակերպություններ. Նմանատիպ դրույթներ ներառված են 2014 թվականի Գումունայ Կազմակերպությունների մասին Հրահանգի հոդված 55-ում:*

### Հոդված 38. Հազվադեպ համատեղ գնումներ

Հոդված 38-ը թույլատրում է երկու կամ ավել պատվիրատուների համաձայնության գալ գնումների որոշակի տեսակներ համատեղ իրականացնելու վերաբերյալ: Նրանք կարող են այսպես վարվել բաշխելով կա՛մ համատեղ պատասխանատվությունը մասնակից պատվիրատուների միջև, կա՛մ անհատական պատասխանատվությունը՝ ըստ պատվիրատուների:

*Կոմունալ Կազմակերպություններ. Նմանատիպ դրույթներ ներառված են 2014 թվականի Կոմունալ Կազմակերպությունների մասին Հրահանգի հոդված 56-ում:*

### Հոդված 40. Նախնական շուկայական խորհրդակցություններ

2014 թվականի Հանրային Հատվածի Հրահանգի հոդված 40-ը ներկայացնում է նախնական շուկայական խորհրդակցությունների կիրառումը թույլատրող նոր դրույթներ: Պատվիրատուները կարող են իրականացնել նախնական շուկայական խորհրդակցություններ “գնման նախապատրաստման և տնտեսվարող սուբյեկտներին գնումների իրենց պլանների մասին տեղեկացնելու նպատակով”: Այս նոր դրույթը զգալիորեն լրացնում է 2004 թվականի Հանրային Հատվածի Հրահանգի դեկլարատիվ բնույթի դրույթ 8-ում սահմանված տեխնիկական երկխոսությունը: Հոդված 40-ը ներառում է խորհրդատվության որոնման և անկախ փորձագետներից, մարմիններից կամ շուկայի մասնակիցներից խորհրդատվության ստացման օրինակներ: Այս գործընթացը չպետք է խաթարի մրցակցությունը կամ խախտի ոչ խտրականության և թափանցիկության սկզբունքները:

*Կոմունալ Կազմակերպություններ. Նմանատիպ դրույթներ ներառված են 2014 թվականի Կոմունալ Կազմակերպությունների մասին Հրահանգի հոդված 58-ում:*

### Հոդված 41. Թեկնածուների և մասնակիցների նախնական ներգրավում

Հոդված 41-ը ներկայացնում է նոր դրույթներ, որոնք արտացոլում են ԵՄՍԴ-ի նախադեպային իրավունքը<sup>8</sup>: Պատվիրատուները պետք է ձեռնարկեն համապատասխան միջոցներ՝ ապահովելու, որ մրցակցությունը չի խաթարվել՝ պատվիրատուին խորհրդատվության տրամադրման կամ գնման նախապատրաստման մեջ ներգրավվածություն ունեցող թեկնածուի կամ մասնակցի մասնակցությամբ: Հոդված 41-ը ներառում է այս առիթով պատվիրատուի կողմից ձեռնարկվող հնարավոր միջոցների օրինակներ:

Պատվիրատուն կարող է նախկին ներգրավվածության հիմքով բացառել թեկնածուին կամ մասնակցին միայն, եթե հավասար վերաբերմունքի ապահովման այլ միջոցներ չկան: Եթե պատվիրատուն որոշում է բացառել այս հիմքով, այն պետք է հնարավորություն տա համապատասխան թեկնածուին կամ մասնակցին ապացուցելու, որ իր նախկին ներգրավվածությունը չի խաթարի մրցակցությունը:

*Կոմունալ Կազմակերպություններ. Նմանատիպ դրույթներ ներառված են 2014 թվականի Կոմունալ Կազմակերպությունների մասին Հրահանգի հոդված 59-ում:*

<sup>8</sup> Մասնավորապես, ԵՄՍԴ որոշումը C-21/03 և C-34/03 Fabricom համատեղ գործերի վերաբերյալ.

## Հոդված 42. Տեխնիկական մասնագրեր

Տեխնիկական մասնագրերին վերաբերող դրույթների հիմնական փոփոխություններն արտացոլում են սոցիալական և բնապահպանական նկատառումների և այս հարցերի վերաբերյալ ԵՄԱԴ նախադեպային իրավունքի զարգացման վրա ավելացող շեշտադրումը<sup>9</sup>:

Հոդված 42-ը սկզբում հաստատում է, որ տեխնիկական մասնագրերը սահմանում են աշխատանքների, ծառայությունների կամ ապրանքների պահանջվող հատկանիշները: Այնուհետև սահմանվում է, որ այս հատկանիշները կարող են վերաբերել նաև.

- ապրանքի արտադրության կամ աշխատանքի կատարման կամ ծառայությունների մատուցման հատուկ գործընթացի կամ մեթոդի;
- աշխատանքի, ծառայության կամ ապրանքի կենսական ցիկլի այլ փուլի համար հատուկ գործընթացի:

Այս դրույթը կիրառվում է նույնիսկ այն դեպքում, երբ այս գործոնները չեն հանդիսանում աշխատանքների, ծառայությունների կամ ապրանքների բուն էության մաս՝ պայմանով, որ դրանք համամասն են և կապված են պայմանագրի առարկայի հետ:

Այս դրույթը կարող է թույլատրել, օրինակ, որ մասնագիրը ներառի արտադրության կամ արտադրանքի վերացման՝ շրջակա միջավայրի համար բարենպաստ եղանակներ կամ պահանջի, որ արտադրական գործընթացը համապատասխանի արդար առևտրի սկզբունքներին: Քանի որ գործում է համարժեքության սկզբունքը, պատվիրատուն պետք է ընդունի այն արտադրանքը, որը բավարարում է պահանջը ցանկացած համապատասխան եղանակով:

Եթե գնման առարկան նախատեսված է մարդկանց կողմից օգտագործման համար, տեխնիկական մասնագրերը պետք է հաշվի առնեն հասանելիության չափորոշիչները: Այս սկզբունքը կիրառվում է հասարակության և պատվիրատուի աշխատակազմի կողմից գնման առարկայի օգտագործման նմատմամբ: Միայն պատշաճ ձևով հիմնավորված հանգամանքներում է, որ այս սկզբունքը չի գործում:

Տեխնիկական մասնագրերը կարող են նաև հղում անել որոշակի ապրանքանիշների: Տես հոդված 43-ի մեկնաբանությունը ստորև:

*Գումունայ Կազմակերպություններ. Նմանատիպ դրույթներ ներառված են 2014 թվականի Գումունայ Կազմակերպությունների մասին Հրահանգի հոդված 60-ում:*

## Հոդված 43. Ապրանքանիշներ

Ապրանքանիշների կիրառմանը վերաբերող նոր դրույթները ներառված են տեխնիկական մասնագրերի փոփոխություններին վերաբերող վերը քննարկված հոդված 42-ում: Պատվիրատուն կարող է պահանջել որոշակի ապրանքանիշ կամ ապրանքանիշի մաս, որպես ապացույց, որ աշխատանքները, ծառայությունները կամ ապրանքները համապատասխանում են որոշակի բնապահպանական, սոցիալական

<sup>9</sup> Մասնավորապես, ԵՄԱԴ որոշումը C-368/10 Commission v Netherlands, որը վերաբերում է արդար առևտրի, բնապահպանական պահանջների ու ապրանքանիշների կիրառմանը

կամ այլ բնութագրերի: Որոշակի ապրանքանիշի պահանջը կարող է ներառվել տեխնիկական մասնագրում, շնորհման չափորոշիչներում կամ պայմանագրի կատարման պայմաններում:

Պատվիրատուն կարող է որոշակի ապրանքանիշ նշել միայն, եթե բավարարված են մի շարք պայմաններ: Այս պայմանները սահմանված են հոդված 43(1)(ա)-ից մինչև (ե).

Կիրառվում է համարժեքության սկզբունքը, հետևաբար, պատվիրատուները պետք է ընդունեն համարժեք ապրանքանիշները և ապացուցման այլ համապատասխան միջոցները:

*Կոմունալ Կազմակերպություններ. Նմանատիպ դրույթներ ներառված են 2014 թվականի Կոմունալ Կազմակերպությունների մասին Հրահանգի հոդված 61-ում:*

#### **Հոդված 46. Չափաբաժիններ**

Չափաբաժիններին վերաբերող դրույթները ընդլայնվել են՝ նպատակ ունենալով խրախուսել պատվիրատուներին՝ բաժանել պայմանագիրը չափաբաժինների և այսպիսով ավելացնել փոքր և միջին ձեռնարկությունների մասնակցությունը: Ենթադրվում է, որ պայմանագիրը կբաժանվի չափաբաժինների և **ոչ պարտադիր դրույթը** թույլատրում է Անդամ երկրներին՝ չափաբաժինների կիրառումը դարձնել պարտադիր: Պատվիրատուները գնումների փաստաթղթերում կամ պայմանագրի հաշվետվության մեջ պետք է ներառեն պայմանագիրը չափաբաժինների չբաժանելու ցանկացած որոշման հիմնական պատճառները: Այլ դրույթներ թույլատրում են պատվիրատուներին՝ համակցել ավելի, քան մեկ չափաբաժինների շնորհումը և սահմանափակել այն չափաբաժինների քանակը, որոնց համար կարող է մասնակիցը հայտ ներկայացնել: Մեկ այլ **ոչ պարտադիր դրույթ** թույլատրում է պատվիրատուին սահմանափակել այն չափաբաժինների քանակը, որոնց համար կարող է մասնակիցը հաղթող ճանաչվել:

#### **Կոմունալ Կազմակերպություններ**

*Նմանատիպ դրույթներ ներառված են 2014 թվականի Կոմունալ Կազմակերպությունների մասին Հրահանգի հոդված 65-ում: Էական տարբերությունն այն է, որ գնումների փաստաթղթերում կամ պայմանագրի հաշվետվության մեջ պայմանագիրը չափաբաժինների չբաժանելու որոշման հիմնական պատճառները ներառելու պահանջ առկա չէ:*

#### **Հոդված 48. Նախնական Տեղեկատվության Հայտարարություն**

**Ոչ պարտադիր դրույթներ – ՆՏՀ որպես մրցույթի հրավեր.** 2014 թվականի Հանրային Հատվածի Հրահանգի հոդված 48-ը պարունակում է ոչ պարտադիր դրույթ, որը ներկայացնում է նախնական տեղեկատվական հայտարարության (ՆՏՀ) նոր ձև. “ՆՏՀ-ն որպես մրցույթի հրավեր”.

ՆՏՀ-ն որպես մրցույթի հրավեր կարող է կիրառվել.

- “պետական կառավարման կենտրոնական մարմին չհանդիսացող” պատվիրատուների կողմից՝ ամբողջապես կարգավորված պայմանագրերի



համար, այսինքն՝ պայմանագրեր, որոնք ենթակա են 2014 թվականի Հանրային Հատվածի Հրահանգին և չեն հանդիսանում «Թեթև ռեժիմի» պայմանագրեր;

- բոլոր պատվիրատուների կողմից «Թեթև ռեժիմի» պայմանագրերի համար: «Թեթև ռեժիմի» պայմանագրերի բացատրության համար, տես Հոդված 74-ից 76-ի վերաբերյալ մեկնաբանությունները:

Պետական կառավարման կենտրոնական մարմին չհանդիսացող պատվիրատուներն այն պատվիրատուներն են, որոնք չեն հանդիսանում Հավելված 1-ում թվարկած պետական կառավարման կենտրոնական մարմիններ:

Պատվիրատուն կարող է կիրառել ՆՏՀ-ն որպես մրցույթի հրավեր՝ մինչև 12 ամսվա ընթացքում (թեթև ռեժիմի պայմանագրերի դեպքում ավելի երկար ժամանակահատվածում) իր կողմից գնվող մի շարք պայմանագրերի մասին հայտարարելու համար: ՆՏՀ-ում՝ որպես մրցույթի հրավերում նկարագրված պայմանագրերի համար հայտ ներկայացնելու հետաքրքրություն ցուցաբերող տնտեսվարող սուբյեկտները պետք է իրենց հետաքրքրությունը հայտնեն՝ ՆՏՀ-ին պատասխանելով: Մրցութային գործընթացը սկսելուց առաջ այլ հայտարարության հրապարակման պահանջ չկա: Պատվիրատուն հրավիրում է ՆՏՀ-ին՝ որպես մրցույթի հրավերի պատասխանելու միջոցով հետաքրքրություն հայտնած տնտեսվարող սուբյեկտներին՝ հաստատելու գման գործընթացում մասնակցության հետաքրքրվածությունը:

ՆՏՀ-ին որպես մրցույթի հրավեր վերաբերող նոր դրույթները նման են 2004 թվականի Գումունալ Կազմակերպությունների Հրահանգում ներառված դրույթներին, որոնք թույլատրում էին պատվիրատուներին առնվազն տարին մեկ անգամ հրապարակել **պարբերական ցուցադրական հայտարարություններ**՝ որպես մրցույթի հրավեր:

*Գումունալ Կազմակերպություններ. 2014 թվականի Գումունալ Կազմակերպությունների մասին Հրահանգի հոդված 67-ը թույլատրում է պարբերական ցուցադրական հայտարարությունների կիրառումը՝ 2014 թվականի Հանրային Հատվածի Հրահանգի հոդված 48-ին համանման դրույթների համաձայն: Տես պարբերական ցուցադրական հայտարարությունների մասին վերը արված մեկնաբանությունը (հոդված 27):*

### **Հոդված 50. Պայմանագրի կնքման հայտարարություններ**

Գնման գործընթացն արագացնելու նպատակով պայմանագրերի կնքման հայտարարությունները ներկայացնելու վերջնաժամկետը կրճատվել է մինչև 30 օր: 2004 թվականի Հանրային Հատվածի Հրահանգի համաձայն՝ ժամկետը 48 օր էր:

Շրջանակային համաձայնագրերի ներքո շնորհված պայմանագրերի վերաբերյալ պայմանագրի կնքման հայտարարություն հրապարակելու պարտավորություն չկա: **Ոչ պարտադիր դրույթներ.** Անդամ երկրները կարող են պահանջել պատվիրատուներից եռամսյակային հիմքով հրապարակել շրջանակային համաձայնագրերի ներքո շնորհված պայմանագրերի վերաբերյալ պայմանագրի կնքման հայտարարությունները:

*Գումունալ Կազմակերպություններ. Նմանատիպ դրույթներ ներառված են 2014*

*Թվականի Կոմունալ Կազմակերպությունների մասին Հրահանգի հոդված 70-ում: Միևնույն ոչ պարտադիր դրույթը ևս կիրառելի է:*

### **Հոդված 53. Գնումների փաստաթղթերի էլեկտրոնային հասանելիությունը**

2014 թվականի Հանրային Հատվածի Հրահանգի նոր պահանջը պարտադրում է պատվիրատուներին առաջարկել համապատասխան գնման փաստաթղթերի ամբողջական, անվճար և անխոչընդոտ հասանելիություն՝ հայտարարության հրապարակման օրից (կամ եթե կիրառվում է ՆՏՀ-ն որպես մրցույթի հրավեր, այն օրից, երբ ուղարկվել է հետաքրքրությունը հաստատելու հրավերը):

Գնման փաստաթղթերը սահմանված են հոդված 2 (13)-ում՝ որպես “ցանկացած փաստաթուղթ, որը ստեղծվել կամ որի վրա հղում է կատարել պատվիրատուն՝ նկարագրելու կամ սահմանելու գնման կամ ընթացակարգի տարրերը, ներառյալ՝ հայտարարությունը, նախնական տեղեկատվության հայտարարությունը, եթե այն կիրառվել է որպես մրցույթի հայտարարություն, տեխնիկական մասնագրերը, նկարագրական փաստաթուղթը, պայմանագրի առաջարկվող պայմանները, թեկնածուների և մասնակիցների կողմից փաստաթղթերի ներկայացման ձևաչափերը, ընդհանուր առմամբ կիրառելի պարտավորությունների վերաբերյալ տեղեկությունները և ցանկացած լրացուցիչ փաստաթուղթ”:

**Մեկնաբանություն.** Այս պահանջը ներառում է այն փաստաթղթերը, որոնք սովորաբար ընդգրկված են մրցույթի հրավերում: Մա նշանակում է, որ երկփուլ ընթացակարգերի դեպքում, ինչպիսին է օրինակ՝ սահմանափակ ընթացակարգը, պատվիրատուն պետք է մրցույթի հրավերի բովանդակությունը հասանելի դարձնի հայտարարության հրապարակման օրից, ոչ թե ավելի ուշ, այսինքն՝ ընտրական փուլի ավարտից հետո, ինչպես նախատեսված էր 2004 թվականի Հանրային Հատվածի Հրահանգով:

Իմաստ չկա մրցութային բոլոր փաստաթղթերն այսքան շուտ հասանելի դարձնել մի քանի փուլեր ներառող ընթացակարգերի դեպքում, մասնավորապես, մրցակցային երկխոսության, բանակցությամբ մրցակցային ընթացակարգի և նորարարական գործընկերության դեպքում: Այս ընթացակարգերի դեպքում, պարտավորությունն ամենայն հավանականությամբ կիրառվում է ընտրական փուլի և մրցույթին կամ ընթացակարգին մասնակցելու սկզբնական հրավերի և ոչ թե բանակցային գործընթացի հետագա փուլերի նկատմամբ:

*Կոմունալ Կազմակերպություններ. Նմանատիպ դրույթներ ներառված են 2014 թվականի Կոմունալ Կազմակերպությունների մասին Հրահանգի հոդված 73 (1)-ում:*

### **Հոդված 57. Բացառման հիմքերը**

Էական փոփոխություններ են կատարվել և՛ բացառման հիմքերի, և՛ թեկնածուներին կամ մասնակցիններին բացառելիս պատվիրատուի որդեգրած մոտեցման հարցում:

Կարևոր է նշել, որ արդարացնող կամ “ինքնամաքման” դրույթներն այժմ պարտավորեցնում են պատվիրատուին յուրաքանչյուր դեպքի համար հաշվի առնել մասնակիցների ներկայացրած ապացույցները, որոնք կարող են հիմք հանդիսանալ վերջիններիս չբացառելու որոշում ընդունելու համար՝ չնայած բացառման հիմքերի

առկայությանը: Նման դրույթները համապատասխանում են ԵՄԱԴ-ի նախադեպային իրավունքին, որը պահանջում է բացառման որոշակի հիմքեր քննել յուրաքանչյուր առանձին դեպքի համար և կասկածի տակ է դնում ավտոմատ բացառման ցուցակների կիրառումը: Տես Համառոտագիր no. 24, “Ավտոմատ բացառման ցուցակների կիրառումը պետական գնումներում” այս հարցի վերաբերյալ հետագա տեղեկատվության և մեկնաբանության համար:

Ինչպես և 2004 թվականի Հանրային Հատվածի Հրահանգի դեպքում՝ բացառման հիմքերը բաժանված են պարտադիր և ոչ պարտադիր հիմքերի: **Ոչ պարտադիր դրույթներ.** Անդամ երկրները կարող են որոշել ոչ պարտադիր հիմքերից մեկը կամ մի քանիսը դարձնել պարտադիր:

**Բացառման պարտադիր հիմքեր.** 2014 թվականի Հանրային Հատվածի Հրահանգի հոդված 57 (1)-ում թվարկված բացառման պարտադիր հիմքերը ծանր իրավախախտումներ են, որոնց համար տնտեսվարող սուբյեկտը դատապարտվել է վերջնական դատավճռով: 2004 թվականի Հանրային Հատվածի Հրահանգում թվարկված՝ հանցավոր կազմակերպություններում մասնակցությանը, կոռուպցիային, խարդախությանը և փողերի լվացմանը վերաբերող իրավախախտումները ներառված են նաև 2014 թվականի Հանրային Հատվածի Հրահանգում: Ներառվել են լրացուցիչ իրավախախտումներ, որոնք կապված են ահաբեկչության, ահաբեկչության ֆինանսավորման, երեխաների աշխատանքի և մարդկային թրաֆիկինգի այլ տեսակների հետ: Հոդված 57 (1)-ում որպես բացառման պարտադիր հիմք թվարկված հանցագործությունները սահմանված են՝ ԵՄ համապատասխան օրենսդրությանը թարմացված հղումներով:

Հոդված 57 (1)-ը պարզաբանում է, որ տնտեսվարող սուբյեկտին բացառելու պարտավորությունը գործում է նաև, երբ վերջնական դատավճռով դատապարտված անձը (i) տնտեսվարող սուբյեկտի վարչական, ղեկավար կամ վերահսկող մարմնի անդամ է կամ (ii) ունի ներկայացուցչական, որոշումների ընդունման կամ հսկողական լիազորություններ:

**Ոչ պարտադիր դրույթներ.** Անդամ երկրները կարող են նախատեսել վերապահում բացառման պարտադիր հիմքերից՝ բացառիկ դեպքերում “հանրային գերակա շահի հետ կապված հիմքերի առկայության դեպքում, ինչպիսիք են օրինակ՝ հանրային առողջությունը կամ շրջակա միջավայրի պաշտպանությունը”:

**Բացառման ոչ պարտադիր հիմքեր.** 2004 թվականի Հանրային Հատվածի Հրահանգում ներառված բացառման որոշ ոչ պարտադիր հիմքերը 2014 թվականի Հանրային Հատվածի Հրահանգում փոփոխվել և ընդլայնվել են՝ ներառելով նաև բացառման լրացուցիչ հիմքեր, որոնք ընդգրկված չէին 2004 թվականի Հանրային Հատվածի Հրահանգում: Ամփոփ, այս լրացուցիչ հիմքերն են.

- Բնապահպանական, սոցիալական և աշխատանքային իրավունքի խախտումներ՝ հոդված 18(2)-ի համաձայն;
- տնտեսվարող սուբյեկտների միջև մրցակցության խաթարմանն ուղղված համաձայնության առկայության հավաստի ցուցիչներ;
- գնման գործընթացի իրականացման ընթացքում ծագող շահերի բախում, որը չի կարելի վերացնել այլ միջոցներով, որոնք բացառումից պակաս վնաս կհասցնեն մասնակցին;

- գնման ընթացակարգին տնտեսվարող սուբյեկտի նախկին ներգրավվածության պատճառով մրցակցության խաթարում, որը չի կարելի վերացնել այլ միջոցներով, որոնք բացառումից պակաս վնաս կհասցնեն մասնակցին;
- տնտեսվարող սուբյեկտի կողմից նախկին պայմանագրի կամ կոնցեսիայի պայմանագրի կատարման էական կամ մշտական թերությունները, որոնք հանգեցրել են նախկին պայմանագրի լուծման, վնասների հատուցման կամ այլ համարժեք պատժամիջոցների;
- եթե տնտեսվարող սուբյեկտը փորձել է ոչ օրինաչափորեն ազդել որոշումների ընդունման ընթացակարգի վրա՝ գաղտնի տեղեկությունների ստացման կամ անփութությամբ շեղող տեղեկություններ տրամադրելու համար:

**Արդարացում կամ “ինքնամաքում”.** 2014 թվականի Հանրային Հատվածի Հրահանգը ներառում է արդարացման կամ “ինքնամաքման” նոր սկզբունք, որը պետք է օժանդակի մրցութային գործընթացից դուրս մնալու հեռանկարներ ունեցող տնտեսվարող սուբյեկտներին:

Հոդված 57 (6) սահմանում է, որ տնտեսվարող սուբյեկտն իրավունք ունի տրամադրել ապացույցներ, որոնք կցուցադրեն իր հուսալիությունը՝ չնայած բացառման պարտադիր կամ ոչ պարտադիր հիմքերի առկայության: Եթե պատվիրատուն նման ապացույցը համարում է բավարար, տնտեսվարող սուբյեկտը չի բացառվի: Հոդված 57 (6) թվարկում է ապացույցի այն տեսակները, որոնք կարող են բավարար լինել պահանջվող հուսալիությունը ցուցադրելու համար\*:

Պատվիրատուները պարտավոր են հաշվի առնել քրեական իրավախախտման կամ հակաիրավական վարքագծի ծանրությունը և կոնկրետ հանգամանքները: Եթե պատվիրատուն որոշում է, որ ապացույցը բավարար չէ, այն տնտեսվարող սուբյեկտին տրամադրում է իր որոշման պատճառները պարունակող փաստաթուղթ:

\* **Մեկնաբանություն.** Հոդված 57 (6)-ի ձևակերպումից ամբողջապես պարզ չէ, թե արդյոք տնտեսվարող սուբյեկտի կողմից ներկայացվող ապացույցների ցանկը սպառիչ ցանկ է, թե պատշաճ համարվող ապացույցի տեսակների ցուցադրական ցանկ: Գործնականում այս ցուցակի առումով ավելի նպատակահարմար կլինեն, եթե այն լիներ ցուցադրական ցանկ, քանի որ հոդված 57 (6)-ում թվարկած ապացույցները չեն վերաբերում բացառման բոլոր հիմքերին:

**Հարկերի վճարման կամ սոցիալական ապահովության պարտավորությունների հետ կապված պարտավորությունների խախտում**

**Ոչ պարտադիր հիմք.** 2004 թվականի Հանրային Հատվածի Հրահանգի համաձայն՝ հարկերի վճարման կամ սոցիալական ապահովության պարտավորությունների խախտման հիմքով տնտեսվարող սուբյեկտի բացառումը ոչ պարտադիր հիմք էր: 2014 թվականի Հանրային Հատվածի Հրահանգի համաձայն՝ այս բացառումը շարունակում է մնալ ոչ պարտադիր հիմք, եթե պատվիրատուն կարող է ցուցադրել այս պարտավորությունների խախտումը “ցանկացած համապատասխան միջոցներով”:

Սյնուամենայնիվ, 2014 թվականի Հանրային Հատվածի Հրահանգը նախատեսում է, որ բացառման այս ոչ պարտադիր հիմքը այլևս չի կիրառվում, եթե տնտեսվարող

սուբյեկտը կատարել է իր պարտականությունները հարկերը կամ սոցիալական վճարները վճարելով կամ վճարման համար պարտադիր համաձայնագիր կնքելով:

**Պարտադիր հիմք.** 2014 թվականի Հանրային Հատվածի Հրահանգի համաձայն՝ հարկերի կամ սոցիալական ապահովության վճարների վճարման հետ կապված պարտավորությունների խախտումն այժմ հանդիսանում է բացառման պարտադիր հիմք, եթե “խախտումը հաստատվել է դատական կամ վարչական որոշմամբ, որը վերջնական է և պարտադիր՝ համաձայն այն երկրի, որտեղ այն հիմնադրվել է կամ պատվիրատուի Անդամ երկրի”:

**Ոչ պարտադիր դրույթ.** Անդամ երկրները կարող են որոշել կիրառել բացառման պարտադիր հիմքից երկու վերապահումները.

- բացառիկ դեպքերում, “հանրային գերակա շահի հետ կապված հիմքերի առկայության դեպքում, ինչպիսիք են օրինակ՝ հանրային առողջությունը կամ շրջակա միջավայրի պաշտպանությունը”:
- եթե բացառումը հստակորեն անհամամասն կլինի: 2014 թվականի Հանրային Հատվածի Հրահանգը նախատեսում է նման հանգամանքների օրինակներ:

**Բացառման առավելագույն ժամկետ.** Անդամ երկրները պետք է սահմանեն բացառման առավելագույն ժամկետներ, որոնք կներառվեն 2014 թվականի Հանրային Հատվածի Հրահանգը կիրարկող իրենց ազգային միջոցառումներում՝ պայմանով, որ դրանք կլինեն սահմանված առավելագույն ժամկետների շրջանակներում:

#### **Կոմունալ Կազմակերպություններ**

*2014 թվականի Կոմունալ Կազմակերպությունների Հրահանգի Հոդված 80-ը Անդամ երկրներին թույլատրում է, սակայն չի պարտադրում պատվիրատուների նկատմամբ կիրառել 2014 Հանրային Հատվածի Հրահանգի հոդված 57-ում սահմանված բացառման պարտադիր և ոչ պարտադիր հիմքերը: Այնուամենայնիվ, Անդամ երկրները պարտավոր են կիրառել 2014 Հանրային Հատվածի Հրահանգի հոդված 57 (1) և 57 (2) այն կազմակերպությունների նկատմամբ, որոնք հանդիսանում են պետական պատվիրատու: Ցանկացած դեպքում հիմքերը պետք է կիրառվեն 2014 Հանրային Հատվածի Հրահանգի հոդված 57-ում սահմանված պայմաններին և դրույթներին համապատասխան:*

#### **Հոդված 67. Պայմանագրի շնորհման չափորոշիչներ**

2004 թվականի Հանրային Հատվածի Հրահանգը նախատեսում է, որ պայմանագրերը պետք է շնորհվեն՝ կիրառելով երկու չափորոշիչներից մեկը. կա՛մ (i) տնտեսապես ամենաշահավետ հայտը, կա՛մ (ii) ամենացածր գին ներկայացրած հայտը:

2014 թվականի Հանրային Հատվածի Հրահանգում մոտեցումը փոխվել է և շեշտն ավելի շատ դրվել է գնից բացի՝ գնահատման այլ չափորոշիչների վրա:

Հոդված 67(2) սահմանում է, որ “պատվիրատուները պետք է պայմանագրերի շնորհումը հիմնեն տնտեսապես ամենաշահավետ հայտի վրա”: Տնտեսապես ամենաշահավետ հայտի հասկացությունը բացատրված է հետևյալ կերպ.

“Պատվիրատուի տեսանկյունից տնտեսապես ամենաշահավետ հայտը պետք է որոշվի՝ հիմք ընդունելով գինը կամ արժեքը՝ օգտագործելով ծախսեր-արդյունավետություն մոտեցումը, ինչպիսին է օրինակ՝ գոյության ողջ ընթացքի

համար հաշվարկած ծախսերը .... և կարող է ներառել լավագույն գին – որակ հարաբերակցությունը, որը պետք է գնահատվի համապատասխան հանրային պայմանագրի առարկային վերաբերող չափորոշիչների հիման վրա, ներառյալ՝ որակական, բնապահպանական և/կամ սոցիալական ոլորտները...”: Այնուհետև հողվածը սահմանում է չափորոշիչների մի քանի օրինակներ, որոնք կարող են կիրառվել “լավագույն գին-որակ հարաբերակցության” գնահատման համար:

**Մեկնաբանություն.** Հոդված 67(2)-ի ձևակերպումը հստակ չէ և բաց է տարբեր մեկնաբանությունների համար: Հստակության պակասը Եվրոպական Պառլամենտի (որը ցանկանում էր արգելել ամենացածր գնի կիրառումը) և Եվրոպական Հանձնաժողովի (որը ցանկանում էր պահպանել ամենացածր գնի չափորոշիչը և ներառել ամենացածր արժեքը որպես չափորոշիչ) միջև թերի փոխզիջման արդյունք է: 2014 թվականի Հանրային Հատվածի Հրահանգի դեկլարատիվ բնույթի դրույթ 89-ը որոշակիորեն օժանդակում է՝ բացատրելով, որ 2004 թվականի Հանրային Հատվածի Հրահանգում կիրառվող “տնտեսապես ամենաշահավետ հայտ” եզրույթը 2014 թվականի Հանրային Հատվածի Հրահանգում այժմ կոչվում է “լավագույն գին-որակ հարաբերակցություն”:

Դրույթների մեկնաբանման տարբերակներից մեկը պատկերված է ստորև.

| Տնտեսապես ամենաշահավետ հայտ<br>Հոդված 67(2)<br>գնահատվում է՝ կիրառելով                                      |            |   |
|---|------------|---|
| <b>Գինը</b>   | <b>կամ</b> | <b>Արժեքը</b>   |
| <ul style="list-style-type: none"> <li>• “կարող է ներառել լավագույն գին-որակ հարաբերակցությունը”</li> </ul> |            | <ul style="list-style-type: none"> <li>• կիրառելով “ծախսեր-արդյունավետություն մոտեցումը”</li> </ul> |

Հնարավոր է կիրառել միայն գինը կամ միայն արժեքը՝ որպես շնորհման չափորոշիչ, քանի դեռ Անդամ երկիրը չի որոշել ընդունել հողված 67(2)-ի վերջին պարագրաֆը: Ըստ այդ **ոչ պարտադիր դրույթի՝** Անդամ երկրները կարող են սահմանել, որ պատվիրատուները չեն կարող կիրառել միայն գինը կամ միայն արժեքը որպես պայմանագրի շնորհման միակ չափորոշիչ:

**Մեկնաբանություն.** Կարելի է վիճաբանել, թե արդյոք գործնականում տեղի են ունեցել շատ փոփոխություններ: Պատվիրատուները դեռևս կարող են շնորհել պայմանագրերը՝ հիմնվելով միայն գնի կամ միայն արժեքի վրա: Նրանք նաև կարող են կիրառել “գին-որակ հարաբերակցություն մոտեցումը”, որը համարժեք է 2004 թվականի Հանրային Հատվածի Հրահանգի “տնտեսապես ամենաշահավետ հայտին”: Երևի թե ամենամեծ փոփոխությունը ծախսերի գնահատման ժամանակ “ծախսեր-արդյունավետություն մոտեցման” կիրառման պահանջն է և գոյության ողջ ընթացքի համար ծախսերի հաշվարկմանը վերաբերող հողված 68-ի պահանջները:

Հանրային Հատվածի Հրահանգի այլ դրույթներ կապված են ԵՄԱԴ-ի նախադեպային իրավունքը և Եվրոպա 2020-ի՝ գնումներում բնապահպանական հարցերի վրա կենտրոնացումն արտացոլող փոփոխությունների հետ: Հոդված 67(3)-ը հաստատում


է, որ շնորհման չափորոշիչները պետք է կապված լինեն պայմանագրի առարկայի հետ, եթե դրանք վերաբերում են գնվող աշխատանքների, ծառայությունների կամ ապրանքների կենսափուլի որևէ փուլի: Այդ կենսափուլը կարող է ներառել արտադրության, մատակարարման կամ վաճառքի հատուկ գործընթացներ:

Նոր դրույթը թույլատրում է նաև կիրառել պայմանագրի կատարման մեջ ներգրավված աշխատակազմի որակավորման, փորձի և կազմակերպվածության հետ կապված շնորհման չափորոշիչները: Այս չափորոշիչները կարող են կիրառվել “եթե պայմանագրի կատարման մեջ ներգրավված աշխատակազմի որակը կարող է ունենալ էական ազդեցություն պայմանագրի կատարման մակարդակի վրա”: Այս դրույթը պարզաբանում է ԵՄԱԴի որոշումից ծագող անորոշությունը, քանի որ որոշ մեկնաբաններ կարծում էին, որ նմանատիպ չափորոշիչները կարող էին կիրառվել միայն որպես ընտրական փուլի չափորոշիչ և երբեք չէին կարող կիրառվել որպես շնորհման չափորոշիչ:<sup>10</sup>

*Գումունայ Կազմակերպություններ. Նմանատիպ դրույթներ ներառված են 2014 թվականի Գումունայ Կազմակերպությունների մասին Հրահանգի հոդված 82-ում:*

**Հոդված 68. Գոյության ողջ ընթացքի համար ծախսերի հաշվարկ**

Ինչպես արդեն իսկ նշվել է, ենթադրվում է, որ հոդված 67(2)-ի համաձայն՝ երբ պատվիրատուն որոշում է շնորհել պայմանագիրը արժեքի հիման վրա, այն պետք է կիրառի ծախսեր-արդյունավետություն մոտեցումը: Ծախսեր-արդյունավետություն մոտեցման օրինակ է գոյության ողջ ընթացքի համար ծախսերի հաշվարկումը: Հոդված 68-ը սահմանում է գոյության ողջ ընթացքի համար ծախսերի հաշվարկման հասկացությունը ԵՄ տեսանկյունից՝ որպես պատվիրատուների կամ այլ օգտագործողների ծախսեր, ինչպես պատկերված է ստորև.



Եթե պատվիրատուներն օգտագործում են գոյության ողջ ընթացքի համար ծախսերի հաշվարկման մոտեցումը, նրանք պետք է գնումների փաստաթղթերում ներառեն

<sup>10</sup> C-532/06 Lianakis.

տնտեսավարող սուբյեկտների կողմից ներկայացվող տվյալների և պետական պատվիրատուի կողմից այս տվյալները գնահատելու համար կիրառվող մեթոդի վերաբերյալ տեղեկությունները: Կիրառվող մեթոդը պետք է բավարարի թափանցիկությանը և հասանելիությանը վերաբերող հոդված 68(2)(ա)-ից մինչև (զ) թվարկած մի քանի պայմանները:

Եթե գոյություն ունի ԵՄ օրենսդրությամբ պարտադրված գոյության ողջ ընթացքի համար ծախսերի հաշվարկման մեթոդ, ապա պետք է կիրառվի այդ մեթոդը: Միայն մեկ պարտադիր մեթոդ է ներառված 2014 թվականի Հանրային Հատվածի Հրահանգի Հավելված XIII-ում, որը վերաբերում է մաքուր և էներգախնայող փոխադրամիջոցների<sup>11</sup> հատկանիշներին: Հնարավոր է ԵՄ մակարդակում գոյության ողջ ընթացքի համար ծախսերի հաշվարկման լրացուցիչ պարտադիր մեթոդի ներառումը:

*Կոմունալ Կազմակերպություններ. Նմանատիպ դրույթներ ներառված են 2014 թվականի Կոմունալ Կազմակերպությունների մասին Հրահանգի հոդված 83-ում:*

### **Հոդված 69. Խիստ ցածր գին ներկայացրած հայտեր**

Խիստ ցածր գին ներկայացրած հայտերին վերաբերող դրույթների հիմնական փոփոխությունը վերաբերում է այն հարցին, թե արդյոք պատվիրատուն պարտավոր է հետաքննել խիստ ցածր գին ներկայացրած հայտը: 2004 թվականի Հանրային Հատվածի Հրահանգի համաձայն՝ պատվիրատուն պարտավոր էր հետաքննել խիստ ցածր գին ներկայացրած հայտը, եթե այն նպատակ ուներ մերժելու հայտը: 2014 թվականի Հանրային Հատվածի Հրահանգը պահանջում է պատվիրատուից հետաքննել բոլոր խիստ ցածր գին ներկայացրած հայտերը՝ անկախ հայտը ընդունելու կամ մերժելու իր մտադրությունից:

*Կոմունալ Կազմակերպություններ. Նմանատիպ դրույթներ ներառված են 2014 թվականի Կոմունալ Կազմակերպությունների մասին Հրահանգի հոդված 84-ում:*

### **Հոդված 71. Ենթակապալ**

Ենթակապալին վերաբերող՝ 2014 թվականի Հանրային Հատվածի Հրահանգի դրույթները շատ ավելի ընդգրկուն են: 2004 թվականի Հանրային Հատվածի Հրահանգի հոդված 25-ը պահանջում կամ թույլատրում էր պատվիրատուներին պահանջել, որպեսզի մասնակիցը նշի առաջարկվող ենթակապալառուին, ինչպես նաև պայմանագրի այն մասը, որի համար վերջինս նպատակ ունի կնքել ենթակապալի պայմանագիր: Այս սկզբունքը ներառվել է 2014 թվականի Հանրային Հատվածի Հրահանգի հոդված 71 (2)-ում: Հոդված 71-ը ներառում է ենթակապալին վերաբերող այլ դրույթներ:

**Ենթակապալառուների վերաբերյալ տեղեկություններ.** Գլխավոր կապալառուն պետք է տեղեկություններ տրամադրի պատվիրատուի ուղղակի հսկողության տակ աշխատող ենթակապալառուների և ենթակապալառուների փոփոխության վերաբերյալ: Այս պահանջը կիրառվում է պայմանագրի շնորհումից հետո և մինչև

<sup>11</sup> Փոխադրամիջոցներն այս ենթատեքստում մեքենաներն են, ավտոբուսները, թեթև առևտրային փոխադրամիջոցները և ծանր բեռների փոխադրամիջոցները



առնվազն պայմանագրի կատարման սկզբի ժամկետը: Պատվիրատուներն ունեն այս պահանջները ընդլայնելու հայեցողություն, օրինակ՝ ենթակապալի շղթայի հետագա ենթակապալառուների նկատմամբ:

**Բնապահպանական, սոցիալական և աշխատանքային իրավունքով նախատեսված պարտավորությունների կատարում՝** հոդված 18 (2)-ի համաձայն և **բացառման այլ հիմքեր.** պարտավորությունների այս կատարումը ներառում է, եթե կիրառելի է, համատեղ պատասխանատվության մեխանիզմները և ստուգումը, որ բացառման համապատասխան հիմքերը չեն վերաբերում ենթակապալառուներին: Այն վերաբերում է նաև գլխավոր կապալառուի պարտականությանը՝ փոխել ենթակապալառուին, որը ենթակա է բացառման՝ այլ հիմքերով:

**Ոչ պարտադիր դրույթներ. Ուղղակի վճարում ենթակապալառուներին.** Անդամ երկրները կարող են սահմանել դրույթներ, որոնք թույլատրում են պատվիրատուին ուղղակի վճարել ենթակապալառուին՝ ենթակապալառուից պահանջի ստացման դեպքում կամ առանց դրա:

**Մեկնաբանություն.** Դեռևս հստակ չէ, թե արդյոք 2014 թվականի Հանրային Հատվածի Հրահանգի համաձայն պատվիրատուները կարող են պահանջել, որ սահմանվի պայմանագրի նվազագույն կամ առավելագույն մաս, որի համար պետք է կնքվի ենթակապալի պայմանագիր:

*Կոմունալ Կազմակերպություններ. Նմանատիպ դրույթներ ներառված են 2014 թվականի Կոմունալ Կազմակերպությունների մասին Հրահանգի հոդված 88-ում:*

## **Հոդված 72. Պայմանագրերի կամ շրջանակային համաձայնագրերի փոփոխություններ՝ դրանց գործողության ընթացքում**

2004 թվականի Հանրային Հատվածի Հրահանգը պարունակում էր գործողության ժամկետի ընթացքում պայմանագրերի կամ շրջանակային համաձայնագրերի փոփոխությունների վերաբերյալ շատ սահմանափակ դրույթներ: Այս դրույթները վերաբերում էին այն հանգամանքներին, երբ թույլատրված էր առանց հայտարարության հրապարակման բանակցային ընթացակարգի կիրառումը: Շատ ավելի լայն դրույթներ են ներառված 2014 թվականի Հանրային Հատվածի Հրահանգի հոդված 72-ում: Այս դրույթներից մի քանիսը կապված են ԵՄԱԴ նախադեպային իրավունքի հետ և ներառում են այն:<sup>12</sup>

2014 թվականի Հանրային Հատվածի Հրահանգի համաձայն՝ առկա են վեց հանգամանքներ, որոնց դեպքում պայմանագրերը կամ շրջանակային համաձայնագրերը կարող են փոփոխվել գործողության ընթացքում՝ առանց նոր մրցակցային ընթացակարգ իրականացնելու պահանջի: Ամփոփ այս հանգամանքները հետևյալն են.

**1) Փոփոխություններ, որոնք հստակ նախատեսվել են գնման նախնական փաստաթղթերում [article 72(1)(ա)].** Եթե գնման նախնական փաստաթղթերը նախատեսում են, որ փոփոխություններն արվում են “պարզ, հստակ և միանշանակ վերանայման դրույթներով”, այս փոփոխությունները թույլատրված են: Հնարավոր փոփոխությունների շրջանակը և բնույթը, ինչպես նաև վերանայման դրույթների

<sup>12</sup> Տե՛ս հղում 3.

կիրառման պայմանները պետք է լինեն հստակ:

**2) Անհրաժեշտ փոփոխություններ, երբ կապալառուն չի կարող փոխվել [հոդված 72(1)(բ)].** Լրացուցիչ պահանջներ կարող են ներկայացվել կապալառուի կողմից, որպես “անհրաժեշտ փոփոխություններ”, եթե կապալառուի փոփոխություն (i) չի կարող իրականացվել տնտեսական կամ տեխնիկական պատճառներից ելնելով և (ii) կհանգեցնի էական անհարմարությունների կամ էականորեն կավելացնի պատվիրատուի ծախսերը:

Այս փոփոխությունը թույլատրված է միայն, եթե ծախսերի ավելացումը չի գերազանցում նախնական պայմանագրի արժեքի 50%-ը: Կարելի է կատարել մի քանի փոփոխություն և 50%-ի ավելացումը վերաբերում է յուրաքանչյուր առանձին փոփոխության: Եթե պատվիրատուն հիմնվում է այս դրույթի վրա, այն պետք է *ԵՄՊՏ*-ում հրապարակի հայտարարություն՝ օգտագործելով հատուկ ստանդարտ հայտարարության ձևաչափ:

**3) Չկանխատեսված հանգամանքների հետ կապված փոփոխություններ [հոդված 72(1)(գ)].** Եթե առաջանում են հանգամանքներ, որոնք պատվիրատուն չէր կարող կանխատեսել, հնարավոր է փոփոխել պայմանագիրը՝ առանց հետագա գնման ընթացակարգի: Այս փոփոխությունը թույլատրված է, եթե (i) այն չի խաթարում պայմանագրի ընդհանուր բնույթը; և (ii) ծախսերի ավելացումը չի գերազանցում նախնական պայմանագրի 50%-ը: Հնարավոր է կատարել մի քանի փոփոխություններ և 50%-ի սահմանը վերաբերում է յուրաքանչյուր առանձին փոփոխության: Եթե պատվիրատուն հիմնվում է այս դրույթի վրա, այն պետք է *ԵՄՊՏ*-ում հրապարակի հայտարարություն՝ օգտագործելով հատուկ ստանդարտ հայտարարության ձևաչափ:

**4) Փոփոխություններ՝ կապված սկզբնական կապալառուին նոր կապալառուով փոխարինելու հետ [հոդված 72(1)(դ)].** Նոր կապալառուն կարող է փոխարինել սկզբնական կապալառուին երեք դեպքում: Այս դեպքերն են, երբ.

- վերանայման միանշանակ դրույթը կամ տարբերակը համապատասխանում է հոդված 72(1)(ա)-ին;
- տեղի է ունեցել “ամբողջական կամ մասնակի իրավահաջորդություն՝ վերակազմակերպման, ներառյալ՝ ձեռքբերման, միաձուլման, միացման կամ սնանկության դեպքում”; փոփոխությունը կարող է իրականացվել՝ պայմանով, որ (i) նոր կապալառուն համապատասխանում է սկզբնապես սահմանված նախաորակավորման չափորոշիչներին; և (ii) կապալառուի փոփոխությունը չի հանգեցնում պայմանագրի այլ էական փոփոխությունների:
- պատվիրատուն ստանձնում է գլխավոր կապալառուի դերը, որպեսզի ստանձնի պարտավորություններ իր ենթակապալառուների նկատմամբ:

**5) Փոփոխություններ, որոնք “ոչ էական են” [հոդված 72(1)(ե) և 72(4)]**

Էական փոփոխություններն այն փոփոխություններն են, որոնք պայմանագիրը դարձնում են սկզբնական պայմանագրից “բնութով էականորեն տարբեր”: “Ոչ էական փոփոխությունները” կարող են կատարվել առանց գնման նոր ընթացակարգ սկսելու պահանջի: Հոդված 72(4) ներառում է այն փոփոխությունների ոչ սպառիչ ցանկը, որոնք միշտ կհամարվեն էական և հետևաբար կպահանջեն գնման նոր

ընթացակարգ:

## 6) Ցածրարժեք փոփոխություններ [հոդված 72(2)]

Եթե փոփոխությունների արժեքը ցածր է, փոփոխությունները թույլատրված են: Փոփոխությունը համարվում է ցածրարժեք, երբ այն չի խաթարում պայմանագրի ընդհանուր բնույթը և երբ փոփոխության արժեքը ցածր է գնման համապատասխան շեմից և ծառայությունների կամ մատակարարման սկզբնական պայմանագրերի 10%-ից կամ աշխատանքների սկզբնական պայմանագրի 15%-ից: Բոլոր փոփոխությունների արժեքները գումարվում են իրար: Ցածրարժեք փոփոխությունների ընդհանուր արժեքը չպետք է գերազանցի գնման համապատասխան շեմը:

**Մեկնաբանություն.** Այս դրույթների ցանկացած խախտում կարող է լինել դատական քննության առարկա: Յուրաքանչյուր Անդամ երկիր սահմանում է համապատասխան ընդդատություն:

*Կոմունալ Կազմակերպություններ. Նմանատիպ դրույթներ ներառված են 2014 թվականի Կոմունալ Կազմակերպությունների մասին Հրահանգի հոդված 89-ում:*

## Հոդված 73. Պայմանագրերի լուծումը

2014 թվականի Հանրային Հատվածի Հրահանգը ներառում է 2004 թվականի Հանրային Հատվածի Հրահանգում չներառված նոր դրույթներ, որոնք վերաբերում են այն դեպքերին, երբ պատվիրատուներն ունեն պայմանագիրը լուծելու հնարավորություն: Այս դեպքերը հետևյալն են.

- **Պայմանագրի էական փոփոխություն.** Եթե պայմանագիրը ենթարկվել է էական փոփոխության, որը պահանջում է գնման նոր ընթացակարգ՝ հոդված 72-ի համաձայն;
- **Բացառման պարտադիր հիմքեր.** Եթե հոդված 57(1)-ում թվարկված բացառման պարտադիր հիմքերը վերաբերում են կապալառուին՝ պայմանագրի շնորհման ժամանակ;
- **ԵԱԴՄ-ի կողմից ճանաչված խախտում.** Եթե պայմանագիրը “չպետք է շնորհվեր կապալառուին՝ հաշվի առնելով Պայմանագրով և [2014 թվականի Հանրային Հատվածի Հրահանգով] սահմանված պարտավորությունների լուրջ խախտումը, որը ճանաչվել է Եվրոպական Միության Արդարադատության Դատարանի կողմից՝ ԵՄԳՊ հոդված 258-ով սահմանված ընթացակարգի համաձայն”:<sup>13</sup>

**Մեկնաբանություն.** Անդամ երկրները կարող են ընտրել այս դրույթները լավագույնս կիրարկելու եղանակները, որպեսզի դրանք ամենահամապատասխան կերպով արտացոլվեն իրենց ազգային իրավական համակարգերում: Հնարավոր է, օրինակ, որ Անդամ երկիրն իր կիրարկող օրենսդրության մեջ սահմանի պարտավորություն պատվիրատուների համար՝ ներառելու հատուկ պայման բոլոր պայմանագրերում: Այլ Անդամ երկրներ կարող են սահմանել ընդհանուր պայման պատվիրատուների

<sup>13</sup> ԵՄԳՊ Հոդված 258-ի համաձայն՝ ներկայացված ընթացակարգը Եվրոպական Հանձնաժողովը կողմից Անդամ երկրի դեմ հարուցած գործ է:

համար՝ համապատասխանելու հողված 73-ի պահանջներին՝ թողնելով մանրամասները պատվիրատուների հայեցողությանը:

*Գումունայ Գազմակերպություններ. Նմանատիպ դրույթներ ներառված են 2014 թվականի Գումունայ Գազմակերպությունների մասին Հրահանգի հողված 90-ում:*

### Վերնագիր III – Գումունների առանձնահատուկ ռեժիմներ

#### Հողվածներ 74-76. “Թեթև ռեժիմ”

2004 թվականի Հանրային Հատվածի Հրահանգով սահմանված էին երկու տեսակի կանոններ ծառայությունների մատուցման պայմանագրերի շնորհման համար: 2004 թվականի Հանրային Հատվածի Հրահանգի Հավելված II Ա-ում թվարկված ծառայությունների նկատմամբ այդ Հրահանգը կիրառվում էր ամբողջապես: Մնացած բոլոր ծառայությունները, որոնք սահմանված էին Հավելված II Բ-ում ենթակա էին սահմանափակ կարգավորման:

Հավելված II Ա-ի և Հավելված II Բ-ի ծառայությունների միջև տարբերությունն այժմ վերացվել է: Դրա փոխարեն 2014 թվականի Հանրային Հատվածի Հրահանգը ներմուծում է հրահանգի Հավելված XIV-ում թվարկված սոցիալական և այլ հատուկ ծառայությունների համար պայմանագրերի շնորհման առանձնահատուկ ռեժիմ:

Հավելված XIV-ում չթվարկված ծառայությունների նկատմամբ 2014 թվականի Հանրային Հատվածի Հրահանգը կիրառվում է ամբողջապես: Հավելված XIV-ում թվարկված ծառայությունները ենթակա են “թեթև ռեժիմի”, եթե պայմանագրի արժեքը գերազանցում է 750 000 եվրոյի շեմը: Հավելված XIV-ում թվարկված ծառայությունները բավականին նման են, սակայն նույնական չեն 2004 թվականի Հանրային Հատվածի Հրահանգի Հավելված II Բ-ի ծառայությունների ցանկին: Հավելված XIV-ում թվարկված ծառայությունները հիմնականում ներառում են առողջապահական, սոցիալական և մշակութային ծառայություններ:

Անդամ երկրներից պահանջվում է սահմանել “թեթև ռեժիմի” ծառայությունների պայմանագրերի շնորհման ազգային կանոններ, որոնք պետք է համապատասխանեն 2014 թվականի Հանրային Հատվածի Հրահանգի հողված 75-76-ում սահմանված մի քանի դրույթներին: 2014 թվականի Հանրային Հատվածի Հրահանգի դրույթները վերաբերում են հետևյալին.

- **Հայտարարում.** “Թեթև ռեժիմի” ծառայությունները պետք է հայտարարվեն *ԵՄՊՏ*-ում՝ օգտագործելով կա՛մ հայտարարության ստանդարտ ձևաչափը, կա՛մ նախնական տեղեկատվության հայտարարությունը (*ՆՏՀ*)՝ որպես մրցույթի հրավեր: Պատվիրատուները պետք է *ԵՄՊՏ*-ում հրապարակեն նաև պայմանագրի կնքման մասին հայտարարությունը:
- **Պայմանագրերի շնորհման սկզբունքները.** Ազգային կանոնները պետք է համապատասխանեն թափանցիկության և տնտեսավարող սուբյեկտների նկատմամբ հավասար վերաբերմունքի սկզբունքներին: Պատվիրատուները կարող են հաշվի առնել որակի, շարունակականության, հասանելիության, մատչելիության ապահովման և թվարկված մի քանի այլ գործոնների անհրաժեշտությունը:

**Ոչ պարտադիր դրույթներ.** Անդամ երկրները կարող են նաև սահմանել, որ ծառայությունները մատուցողի ընտրությունը պետք է կատարվի “լավագույն գին-որակ հարաբերակցության” հիման վրա:

*Կոմունալ Կազմակերպություններ. Նմանատիպ դրույթներ ներառված են 2014 թվականի Կոմունալ Կազմակերպությունների մասին Հրահանգի հոդված 91-93-ում և Հավելված XVII-ում: Ֆինանսական շեմն ավելի բարձր է և կազմում է 1 000 000 (1 միլիոն) եվրո:*

**Հոդված 77. Որոշակի “թեթև ռեժիմի” ծառայությունների համար վերապահված պայմանագրեր**

**Ոչ պարտադիր դրույթներ.** Ոչ պարտադիր դրույթը կապված է “թեթև ռեժիմի” հետ: Այս դրույթը թույլատրում է Անդամ երկրներին՝ սահմանափակել որոշ “թեթև ռեժիմի” ծառայությունների համար մրցութային գործընթացին մասնակցությունը՝ միայն որոշակի կազմակերպությունների տեսակով: Ծառայությունների ցանկը, որոնց վերաբերում է այս ոչ պարտադիր դրույթը, շատ ավելի հակիրճ է, քան Հավելված XIV-ի ցանկը և շեշտը դրվում է առողջապահական և սոցիալական ծառայությունների վրա: Մրցութային գործընթացին մասնակցությունը կարող է սահմանափակվել այն կազմակերպություններով, որոնք բավարարում են իրենց նպատակներին, սեփականությանը, կառավարման կառուցվածքին և նախկինում շնորհված պայմանագրերի վերաբերող պայմանները: Այս ոչ պարտադիր դրույթի նպատակն է մրցութային գործընթացին մասնակցությունը սահմանափակել աշխատակիցների սեփականություն հանդիսացող կազմակերպություններով կամ նման մարմիններով:

*Կոմունալ Կազմակերպություններ. Նմանատիպ դրույթներ ներառված են 2014 թվականի Կոմունալ Կազմակերպությունների մասին Հրահանգի հոդված 94-ում*